ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Գագիկ Տեր-Հարությունյան

Հայ-թուրքական վերջին զարգացումները առիթ հանդիսացան նորովի դիտարկելու Հայության ներկայիս հիմնախնդիրները, անդրադառնալու մեր քաղաքական պատմությանն ու հնարավոր հեռանկարներին: Նման միտումները խիստ ակտուալ են, քանի որ ե՛ւ մեզանում, ե՛ւ մեզ շրջապատող աշխարհում ընթանում են փոփոխություններ, որոնք թելադրում են մշակել նոր իրողություններին համարժեք ռազմավարություն: Ինչպես իրավացիորեն նշել է 19-րդ դարի անգլիացի մտածող Ջոն Սթյուարտ Միլը՝ «հիմնարար սկզբունքների/գաղափարների շուրջ լուրջ բանավեճերի բացակայությունը կազմալուծում, աղճատում է անգամ այդ գաղափարները»: Ակնհայտ է, որ առանց նոր մոտեցումների՝ ազգային հիմնահարցերի (իսկ դրանց թիվը մեծ է) լուծումն առնվազն վիճահարույց է: Փորձենք համառոտակի անդրադառնալ դրանցից մի քանիսին:

Սփյուռք. ավանդույթներ եւ նոր հրամայականներ

Սփյուռքում տիրող իրադրության հետ անգամ հպանցիկ ծանոթությունից հետեւում է, որ գոյատեւմանն ուղղված «հայկական գաղութների» ռազմավարությունն այսօր բավարար չէ, որպեսզի հայ համայնքներին նետված բազմաբնույթ մարտահրավերներին տրվեն արդյունավետ պատասխաններ: Նախկինում ընդունված կացութաձեւն այժմ կազմալուծվում է տարաբնույթ արտաքին եւ ներքին գործոնների ազդեցության հետեւանքով, ու մեղմել, կամ առավել եւս՝ արգելել այդ ազդեցությունները՝ գրեթե անհնար է: Գաղտնիք չէ, որ այդ իրողությունները մասամբ բնորոշ են նաեւ հայաստանյան (ՀՀ, ԼՂՀ եւ Ջավախք) իրականությանը: Կարելի է արձանագրել, որ ստեղծված իրադրությունը հասունացել է, որպեսզի հայկական ընտրանին փորձի վերիմաստավորել ավանդական դարձած ինքնակազմակերպման ընտանեկան, համայնքային, կուսակցական, կրոնական ձեւաչափերը եւ փորձի մշակել ազգային նոր հայեցակարգեր: Սակայն եթե նշված ուղղություններով իրոք կատարվեն քաղաքական ինովացիաներ, ապա պետք է խուսափել «քանդենք հինը, կառուցենք նորը» կարգախոսի կիրառումից (հատկապես, երբ դեռ «նորի» վերաբերյալ պատկերացումներն աղոտ են, եւ երբ դեռ չեն ձեւավորվել նորին անցնելու անհրաժեշտ նախապայմանները): Նման «հեղափոխական» մոտեցումներն առաջացնում են, այսպես կոչված, «խզումներ» ազգային

հոգեւոր ու մտավոր ոլորտում, որոնք եւ արգելակում են հանրության առաջընթացը:

Մասնավորապես, այսօր կարելի է լսել կարծիքներ, թե Ցեղասպանության խնդիրն արդեն իրեն սպառել է եւ ժամանակն է Հայությունը համախմբել ոչ թե «անցյալի ողբերգական» դեպքերի, այլ «այժմեական եւ պոզիտիվ» գաղափարների շուրջ: Նման հարցադրումը, անշուշտ, դիլետանտական է. պետք է հստակ տարանջատել ազգային հիշողության խնդիրը, միջազգային ճանաչման քաղաքական գործընթացները եւ նոր, համահայկական նախագծերի ձեւավորումն ու իրագործումը:

Հոգեւոր տեսանկյունից՝ Ցեղասպանության եւ հայրենազրկության (գուցե ավելորդ չէ միջազգային շրջանառության մեջ դնել «դեպատրիացիա» եզրը եւ, «գենոցիդին» զուգահեռ, տալ դրա քաղաքական-իրավաբանական գնահատականները) իրողությունն ազգային գիտակցության մասն են կազմում եւ, համաձայն այդ սահմանման, քննարկման առարկա չեն կարող լինել: Նկատենք նաեւ, որ հոգեբանական տեսակետից էլ այդ ողբերգության հիշողությունը պարունակում է հատուցման գործողությունների դիմելու շարժառիթ (մոտիվացիա), եւ դրա արտահայտություններից մեկը Ցեղասպանության միջազգային ճանաչման քաղաքական գործընթացն է:

Ցեղասպանության ճանաչման խնդիրը

Այս գործընթացը Հայության համար ոչ միայն բարոյական, այլեւ քաղաքական նշանակություն ունի: Միջազգային հանրությունում խնդրի նկատմամբ ձեւավորված մոտեցումներն անդրադառնում են Թուրքիայի եւ, մասամբ, նրա դաշնակից Ադրբեջանի «վարկանիշի» վրա՝ նրանց որակելով որպես «գենոցիդոգեն» երկրներ: Այդպիսով, Ցեղասպանության միջազգային ճանաչումը, թուրք-ադրբեջանական հնարավոր ոտնձգությունների տեսանկյունից, յուրօրինակ զսպաշապիկ է եւ բարձրացնում է Հայաստանի ազգային անվտանգության մակարդակը: Այդ գործոնը լրացուցիչ հիմնավորում է նաեւ մեր դիրքորոշումը ԼՂՀ խնդրի շուրջ վարվող բանակցություններում, իսկ հայ-թուրքական վերջին դիվանագիտական զարգացումներում խնդրի միջազգային արծարծումը որոշակիորեն նպաստեց ՀՀ վարած քաղաքականությանը: Նկատենք նաեւ, որ Ցեղասպանության ճանաչման գործընթացի ածանցյալները՝ մշակութային ժառանգության պահպանման հարցերը եւ առանձին գույքային-նյութական արժեքների վերաբերյալ դատավարությունները, ինչպես հայտնի է, բավական արդյունավետ են եւ արժանի հատուկ ուշադրության:

Միեւնույն ժամանակ, առայսօր Ցեղասպանության քաղաքական գործոնն առավել օգտագործվում է այլոց կողմից: Օրինակ, ԱՄՆ նախա-

գահի կողմից «գենոցիդ-ցեղասպանություն» բառն արտասանվել է դեռեւս 1981թ. ապրիլի 22-ին՝ հոլոքոստի հիշատակի օրվա առիթով, երբ նախագահական իր ելույթի տեքստում Ռ.Ռեյգանն ասել է. «Հոլոքոստի դասերը չպետք է մոռացվեն, ինչպես չպետք է մոռացվեն դրան նախորդած Հայերի ցեղասպանությունը եւ հաջորդած Կամբոջայի ցեղասպանությունը...»: Նման հայտարարությունը ենթարկվում էր Սառը պատերազմի տրամաբանությանը եւ ուղղված էր ԽՍՀՄ-ի դեմ, քանի որ խորհրդային տարիներին Հայաստանում (ինչպես նաեւ այլ հանրապետություններում) ծայր առած ազգային շարժումներին աջակցումը բխում էր Միացյալ Նահանգների շահերից: Ներկայումս իրավիճակն այլ է, եւ մոտ ապագայում ԱՄՆ նախագահը դժվար թե արտասանի «գենոցիդ» բառը, քանի որ դա հակասում է Միացյալ Նահանգների գործող քաղաքականությանը:

Սակայն հասկանալի է նաեւ, որ եթե ողջ աշխարհն էլ ընդունի Ցեղասպանության փաստը, ապա դա ամենեւին չի նշանակում, թե Արեւմտյան Հայաստանը «սկուտեղի վրա» կվերադարձվի Հայությանը: Այդ խնդրում, թերեւս, պետք է հրաժարվել հրեության նախադեպի գերագնահատումից. Գերմանիայի կողմից հոլոքոստի ընդունումը եւ ռեպարացիաների կատարումը պայմանավորված էին այդ երկրի պարտությունով՝ դաշնակիցների զորքերը կանգնած էին Բեռլինում: Նկատենք նաեւ, որ հրեաներն իրենք էին «նախապատրաստել» իրենց պետության ստեղծումը՝ տասնամյակներ տեւած մտավոր-գաղափարախոսական եւ կազմակերպչական-տնտեսական նպատակաուղղված աշխատանքով: Մեր պարագայում, Ցեղասպանության փաստի համընդհանուր ճանաչումն, ամենայն հավանականությամբ, կընդունի մոտավորապես այն ձեւը, որին ականատես եղանք, երբ Սերբիայի խորհրդարանը զղջում արտահայտեց Բոսնիայի բնակչության դեմ կատարված գործողությունների կապակցությամբ: Անկարան կհամաձայնվի փոխհատուցումների միայն այն պարագայում, երբ կունենա կազմալուծված երկրի կարգավիճակ:

Այսպիսով, կարելի է փաստել, որ Ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացն, իր՝ ընդհանուր առմամբ դրական նշանակությամբ հանդերձ, ունի արդյունավետության որոշակի սահմանափակումներ եւ չի կարող վերջնանպատակ ծառայել Հայաստանի եւ Հայության համար: Այլ խոսքերով, եթե Ցեղասպանության փաստը համընդհանուր ճանաչում ստանա, ապա խիստ մշուշոտ է, թե ինչպիսին պետք է լինի դրանից հետո Հայության քաղաքական ռազմավարությունը: Հարցին հստակ պատասխան չունենալը վկայում է, որ առայժմ մեր հանրությունում բացակայում են անհրաժեշտ ռազմավարական մտածողության ռեսուրսները, մինչդեռ այդ ընդհանրական ռեսուրսների չափն անմիջականորեն կապված է «Ազգային անվտանգություն» (ԱԱ) հասկացության հետ:

Ազգային անվտանգության արդի մեկնաբանություններ

Այսօր ԱԱ հասկացությունը ենթարկվում է վերափոխումների եւ, ի լրումն անվտանգության ապահովման համար անհրաժեշտ ռեսուրսների վերաբերյալ նախկին պատկերացումների, ԱԱ գլխավոր չափանիշներից է դարձել հանրության զարգացման կարողությունը: Մասնավորապես համարվում է, որ ԱԱ նախկինում արդյունավետ համարվող «մարտահրավեր-համարժեք պատասխան» համակարգն արդի պայմաններում արդեն բավարար չէ, եւ միայն այդ սկզբունքի կիրառումը կարող է անգամ փակուղի տանել: Նոր մոտեցումները ենթադրում են, որ զարգացման եւ անվտանգության համաձայնեցման պարադիգմը հնարավոր է իրագործել «անվտանգություն՝ զարգացման միջոցով եւ զարգացում՝ անվտանգության միջոցով» սկզբունքի դիալեկտիկայով: Նման մեթոդաբանությամբ դիտարկելով անվտանգության խնդիրները՝ կարելի է հանգել եզրահանգման, թե զարգացման գործընթացի հիմնական «պատասխանատուն» մարդը եւ մարդկային հանրությունն են, որոնց զարգացման (կազմակերպման, գիտելիքների եւ ունակությունների ձեռքբերման) մակարդակն է, որ պայմանավորում է ազգ-պետության անվտանգությունը: Այստեղից հետեւում է նաեւ, որ զարգացումը ռազմավարության արտահայտություններից է, որը ենթադրում է ինչպես «փոքր քայլերի», այնպես էլ «թռիչքային» («փոքր քայլերով» ձեռքբերումների կրիտիկական քանակի կուտակումից հետո) մարտավարություն, ինչն էլ, համաձայն չինական սահմանման, ապահովում է «ապագայի նվաճումը»:

Վերոնշյալի համատեքստում դիտարկելով Հայության եւ Հայաստանի ապագայի խնդիրները՝ պետք է արձանագրենք, որ զարգացման տեսանկյունից ունենք լուրջ հիմնախնդիրներ: Հայտնի է, որ Հայաստանի մտավոր ներուժը վերջին քսանամյակում որակապես նվազել է, իսկ ոլորտի զարգացման նախագծերն առայժմ մեծ լավատեսություն չեն ներշնչում: Առավել վատ են գործերը Սփյուռքում, որտեղ դեռեւս չեն ձեւավորվել ազգային գիտության անհրաժեշտության համապատասխան մտածողությունը եւ մշակույթը: Ինչպես հայտնի է, արտերկրում գործում են հայկական բազմաթիվ կազմակերպություններ, որոնք, սակայն (բացառություն է, թերեւս, Գալուստ Գյուլպենկյան հաստատությունը), գիտակրթական ոլորտին սակավ են անդրադառնում (այստեղ չենք դիտարկում համայնքային ու կիրակնօրյա դպրոցները, որոնք առավել հայապահպանական ուղղվածություն ունեն, թեեւ այդ առումով էլ այսօր բավական ճգնաժամային վիճակ է): Նկատենք նաեւ, որ սփյուռք ունեցող այլ ազգեր գիտակրթական գործունեությունը հովանավորող բազմաթիվ հիմնադրամներ են ստեղծել:

Ըստ մեզ, վերոնշյալ ռազմավարական թերացումը պայմանավորված է ոչ թե միջոցների հարաբերական պակասությամբ, այլ հայկական ընտրանու աշխարհայացքային մոտեցումներով: Հաճախ որպես գերխնդիր ընկալվում է Ցեղասպանության ճանաչման սոսկ գործընթացը, որի լոբբինգի վրա, օրինակ՝ ԱՄՆ-ում, ծախսվում են բավական մեծ միջոցներ, արտակարգ նշանակություն է տրվում եկեղեցիների, հուշարձանների կառուցմանը: Անշուշտ, այդ ամենը խիստ կարեւոր է, սակայն, դրա հետ մեկտեղ, անուշադրության է մատնվում ազգային անվտանգության ամենաառաջնային գործոնը՝ մարդկային կապիտալի ձեւավորումը եւ զարգացումը: Այստեղ գուցե հիմնավորված է այն հարցը, թե ինչ կոնկրետ նպատակների պետք է ծառայի ազգային անվտանգության ռազմավարությունը:

Հնարավոր սցենար երրորդ «սառը պատերազմում»

Արդի աշխարհում հասունանում են քաղաքական գլոբալ տեղաշարժեր՝ պայմանավորված բազմաբեւեռ համակարգի ձեւավորմամբ: Համաձայն որոշ վերլուծական սցենարային զարգացումների, որոնք հիմնվում են արդեն այսօր նշմարվող միտումների վրա, ներկայիս «բաժանման» գործընթացներին հետեւելու է նոր, քաղաքակրթական հատկանիշների հիման վրա ստեղծված ասոցիացիաների ձեւավորում: Մասնավորապես, չի բացառվում Եվրոպա–Ռուսաստան (այլ տարբերակներում՝ ԱՄՆ-ի հետ միասին) ռազմաքաղաքական ասոցիացիայի ձեւավորում՝ ընդդեմ Արեւելքից սպասվող սպառնալիքների: Այս նոր բնույթի՝ Երրորդ «սառը պատերազմում» Հայաստանը հնարավոր է, որ հայտնվի պայմանական Եվրոպա–Ռուսաստան բլոկում, իսկ մեր թուրքալեզու հարեւանները՝ պայմանական «Արեւելքում»: Այդ պարագայում Հայաստանը կարող է ձեռք բերել «սահմանային» պետության կարգավիճակ (ինչպիսին որ ունի Իսրայելը Մերձավոր Արեւելքում)՝ դրանից բխող մեծ ռիսկերով եւ հնարավորություններով:

Անշուշտ, վերոնշյալ սցենարը տեսական բնույթ է կրում, սակայն պետք է հիշել, որ, ասենք, 1980թ. գրեթե անհնար էր պատկերացնել, թե մեկ տասնամյակ հետո կընթանա պատերազմ, եւ կստեղծվեն հայկական երկու հանրապետություններ: Միեւնույն ժամանակ, հայտնի է, որ որեւիցե «դրական սցենար» իրագործելի է միայն զարգացումներին նախապես պատրաստվելու եւ անհրաժեշտ ջանքեր գործադրելու պարագայում, ինչն էլ, իր հերթին, հնարավոր է միայն ռազմավարական զարգացման պայմաններում:

ՀԱՅԱՍՏԱՆ–ԻՐԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ. ՈՐՈՇ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

Սեւակ Սարուխանյան

Չնայած տարածաշրջանում տեղի ունեցող վերադասավորումներին, հարաբերություններն Իրանի հետ Հայաստանի համար շարունակում են հատուկ տեղ զբաղեցնել: Դրանց ընթացքն այսօր բավական ակտիվացել է, քանի որ արդեն գրեթե 20 տարվա պատմություն ունեցող Հայաստան–Իրան կապերը վերջին մի քանի տարիներին բավական լուրջ տնտեսական լիցք են ստացել, իսկ Իրանի ակտիվացումը ԼՂՀ կարգավորման գործընթացում նոր քաղաքական բնույթի կարեւորություն է տալիս Երեւան–Թեհրան հարաբերություններին: Ստորեւ անդրադառնանք հայ-իրանական հարաբերությունների մի քանի կարեւոր հիմնախնդիրների:

Իրանի հնարավոր միջնորդությունը ԼՂՀ-ի շուրջ ընթացող բանակցություններում

Վերջին ամսվա ընթացքում Իրանը տարածաշրջանային գործընթացներում ավելի ակտիվ մասնակցության հայտ ներկայացրեց: 2009թ. Թեհրանի կողմից Երեւանի եւ Բաքվի ուղղությամբ մի քանի անգամ հնչեցված պատրաստակամությունը՝ աջակցել ԼՂՀ հակամարտության կարգավորման գործընթացին, 2010-ի ապրիլին ձեւափոխվեց պաշտոնական առաջարկության՝ դառնալ հակամարտության կարգավորմանը եւ բանակցություններին աջակցող միջնորդ: Իրանի ԱԳՆ ղեկավար Մ.Մոթաքիի խոսքերով՝ Թեհրանը Երեւանին եւ Բաքվին է ներկայացրել ԼՂՀ հարցին առնչվող առաջարկություններ, որոնք, ամենայն հավանականությամբ, սահմանափակվում են ԱԳՆ ղեկավարների մակարդակով եռակողմ բանակցությունների անցկացման առաջարկությամբ:

Իրանի այսօրինակ ակտիվացման պատճառների բացահայտումը բավական կարեւոր է, որն անհրաժեշտ է դիտարկել՝ հասկանալու համար, թե իրականում ինչի է ձգտում Իրանը ԼՂՀ հարցի կարգավորման գործընթացում: Իրանի ակտիվացումը հայ-ադրբեջանական հակամարտության կարգավորման ուղղությամբ մի քանի պատճառ ունի, որոնցից, մեր կարծիքով, հիմնականներն են.

1. Իրանը, հիմնականում, տեղեկացված չէ ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում տարվող հայ-ադրբեջանական բանակցությունների մասին: Իրանի տեղեկությունները բանակցային գործընթացի բնույթի եւ արդյունքների մասին բավական մակերեսային են, քանի որ ո՛չ Հայաստանը, ո՛չ Ադրբեջանը եւ ո՛չ էլ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները Թեհրանին տեղյակ չեն պահում բանակցությունների ընթացքի եւ իրական բովանդակության մասին: Այս պայմաններում Իրանի տեղեկացվածությունը ԼՂՀ կարգավորման հարցի շուրջ հիմնականում ձեւավորվում է հայաստանյան եւ ադրբեջանական մամուլում հրատարակվող նյութերից, տարբեր վերլուծաբանների, քաղաքական, այդ թվում նաեւ ընդդիմադիր գործիչների կողմից հնչեցվող կարծիքներից: Իսկ դրանք հիմնականում վերջին տարվա ընթացքում ասում են, որ հայերն ու ադրբեջանցիները մոտ են հակամարտության հանգուցալուծմանը: Եվ այստեղ կարեւոր չէ, թե որքանով են դրանք մոտ իրականությանը: Կարեւորն այն է, որ Թեհրանը սկսում է լուրջ մոտենալ հակամարտության մոտակա կարգավորման հնարավորությանը եւ անհանգստանում է այն կապակցությամբ, որ նման կարգավորումը կարող է բերել իր դիրքերի թուլացմանը *(խոսքն առաջին հերթին հակամարտության գոտում միջազգային խաղաղապահների տեղակայման հարցին է վերաբերում),* ինչն Իրանին ստիպում է միջոցներ գտնել մասնակից դառնալու բանակցային գործընթացին՝ փորձելով նվազեցնել հնարավոր կորուստները:

2. Երկրորդ կարեւոր պատճառ պետք է դիտարկել Թուրքիայի ակտիվացումը տարածաշրջանում: Չնայած Թեհրանի հարաբերություններն Անկարայի հետ վերջին շրջանում բավական ջերմացել են, Իրանը Թուրքիային երկարաժամկետ կտրվածքով դիտարկել եւ դիտարկում է որպես հիմնական մրցակից Հարավային Կովկասում եւ Կենտրոնական Ասիայում ազդեցության տարածման գործում: Այս տեսանկյունից Թուրքիայի կողմից անընդհատ հնչող հայտարարությունները, թե ԵԱՀԿ Մինսկի խումբը սպառել է հնարավորությունները, առաջացնում են Իրանի կասկածները, թե Անկարան փորձում է ստանձնել նոր միջնորդային առաքելություն հայ-ադրբեջանական հակամարտության կարգավորման գործում: Ակնհայտ է, որ Երեւանը նման միջնորդություն թույլ չի տա, սակայն *Բաքվի եւ Անկարայի կողմից Մինսկի խմբի դեմ տարվող գիծը Թեհրանին ստիպում է փորձել տեղ զբաղեցնել «նոր միջնորդության» համար սկսված գործընթացում:*

Այն, որ Բաքուն Իրանի միջնորդության առաջարկությանը դրական պատասխան է տվել, չի նշանակում, թե Իրանը մերձեցել է Ադրբեջանի հետ: Սակայն դա չի էլ նշանակում, որ, հաշվի առնելով Թեհրանի հետ

ունեցած ռազմավարական հարաբերությունները, Երեւանը պետք է իրանական առաջարկությանը միանշանակ դրական պատասխան տա: Բաքվի դրական արձագանքը Թեհրանի առաջարկությանը, ամենայն հավանականությամբ, բացատրվում է ոչ թե նրանով, որ ԻԻՀ-ի միջոցով Ադրբեջանը կարող է հասնել իր ուզած կարգավորման տարբերակին, այլ Բաքվի ցանկությամբ տապալել ԵԱՀԿ Մինսկի խմբի «միջնորդական մենաշնորհը»: Իրան–Հայաստան–Ադրբեջան առաջին իսկ բանակցությունները հարված են լինելու ԵԱՀԿ Մինսկի խմբի դիրքերին եւ Բաքվին հետագայում հիմք են տալու փորձել Թուրքիային ներքաշել ԼՂՀ հիմնախնդրի լուծման գործընթացի մեջ:

Հաշվի առնելով վերը նշվածը՝ պետք է ասենք, որ ՀՀ-ի համար Թեհրանի առաջարկությունը հեռանկարային չի կարելի համարել՝ չնայած Իրանը Հայաստանի հուսալի եւ կարեւոր գործընկերն է:

Առեւտրատնտեսական հարաբերություններ

Հայաստան–Իրան գազատարի կառուցման ավարտից հետո հայ-իրանական հարաբերությունները թեւակոխել են նոր փուլ, ինչը բնորոշվում է տնտեսական գործոնի ակտիվացմամբ: Չնայած Հայաստանը Ռուսաստանից բնական գազ է ներկրում աննախադեպ ցածր գներով եւ դեռեւս Իրանից Հայաստան գազ չի ներկրվում, գազատարը կարեւոր ռազմավարական նշանակություն ունի ՀՀ-ի համար, քանի որ այն լուծում է առաջնային նշանակության մի շարք խնդիրներ.

1. Ստեղծում է Վրաստանի տարածքով գազի ներկրման այլընտրանք՝ ապահովելով մեր էներգետիկ անվտանգությունը հարավկովկասյան հնարավոր նոր ապակայունացման դեպքում:

2. Հնարավորություն է տալիս Հայաստանին, օգտագործելով ներկրվող բնական գազը, մեծացնել արտադրվող էլեկտրաէներգիայի ծավալները:

Վերջին հանգամանքը Հայաստանի համար կարեւոր է, քանի որ այն հնարավորություն կտա ավելացնել Իրան արտահանվող էլեկտրաէներգիայի ծավալները եւ վաղ թե ուշ բացման ենթակա Թուրքիայի էլեկտրաէներգիայի շուկայի գրավման պոտենցիալ ստեղծել: «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի կողմից մինչեւ տարեվերջ շահագործման հանձնվելիք Հրազդանի ՋԷԿ-ի նոր 5-րդ՝ հզոր եւ ժամանակակից էներգաբլոկի հնարավորություններն էլ ավելի են ամրապնդելու ՀՀ էներգետիկ անվտանգությունը, իսկ այստեղ արտադրվող էլեկտրաէներգիան, ամենայն հավանականությամբ, կարտահանվի Իրան՝ ավելացնելով մեր ազգային էներգետիկ

ընկերությունների մասնաբաժինն Իրանի շուկայում: Իսկ այն կայուն կերպով աճում է. չնայած իրանական իշխանությունների քաղաքականությանը, երկրում էլեկտրաէներգիայի սպառումը շարունակում է աճել: 2009-ին այն արձանագրել է 4,2% աճ, ինչը շատ բարձր ցուցանիշ է:

ՀՀ-Իրան տնտեսական հարաբերությունների կարեւոր բաղկացուցիչ է նաեւ Արաքսի վրա նոր ՀԷԿ-ի կառուցման նախագիծը, որն իրականություն կդառնա մոտակա տարիներին:

Սակայն առեւտրատնտեսական համագործակցության ոլորտի ամենամեծ եւ հավակնոտ ծրագիրն, իհարկե, Հայաստան–Իրան երկաթգծի կառուցումն է: Այս նախագծի իրականացման գործընթացում կան մի քանի՝ օբյեկտիվ բնույթի խնդիրներ: Դրանք են.

1. Ֆինանսավորման խնդիր. Երկաթգծի կառուցման ծախսերը տարբերվում են՝ կապված այն բանի հետ, թե որ տարածաշրջանում են իրականացվում շինարարական աշխատանքները: Չինաստանում եւ Ռուսաստանում 1 կմ երկաթգծի կառուցումն արժե $1,5-ից մինչեւ 12 մլն, Շվեյցարիայում՝ մոտ 30 մլն: Մեր տարածաշրջանի համար հիմնարար թիվ կարող է ընդունվել Իրանի տարածքում կառուցվող Ղեզվին–Ռեշտ–Աստարա երկաթծի 1 կմ-ի արժեքը, որը հավասար է $14 մլն-ի: Ամենահամեստ հաշվարկներով՝ Հայաստան–Իրան երկաթուղային կապի ստեղծման համար անհրաժեշտ է կառուցել մոտ 250 կմ նոր երկաթգիծ, ինչի ընդհանուր արժեքը կարող է հասնել մինչեւ $4 մլրդ-ի: Սա բարձր գին է, եւ այդ գումարի հայթայթման խնդիրը բավական բարդ է լինելու:

2. Բեռնափոխադրման ծավալների ապահովում. ՀՀ–Իրան բեռնափոխադրման ծավալները բավական ցածր են եւ կազմում են տարեկան մոտավորապես 600 հազար տոննա (ՀՀ ընդհանուր բեռնափոխադրման ծավալը 2009թ.՝ 4,571 մլն տոննա): Ըստ տարբեր վերլուծությունների եւ տվյալների՝ աշխարհում նոր երկաթգծի կառուցման շահավետության համար անհրաժեշտ է, որ ամեն նոր կառուցվող երկաթգծային կիլոմետրին տարեկան բաժին ընկնի մոտ 30.000 տոննա բեռնափոխադրում: Այս տեսանկյունից Հայաստան–Իրան երկաթգծի կառուցման շահավետությունն ապահովելու համար անհրաժեշտ է ապահովել մոտ 7,5-8 մլն տոննա բեռնափոխադրում այս երկաթուղով, ինչը մոտ 2 անգամ գերազանցում է ՀՀ բեռնափոխադրման տարեկան ընդհանուր ծավալները եւ ավելի քան 10 անգամ՝ Հայաստան–Իրան ուղղությամբ ընթացող բեռնափոխադրման չափերը:

Երկրորդ հանգամանքը հիմնական բացասական դերն է խաղալու երկաթծի շինարարության համար ֆինանսավորում հայթայթելու գործում: Սակայն գործընթացն, այնուամենայնիվ, հնարավոր է դրական հունով տանել, քանի որ երկաթգիծը զուտ տեխնիկապես կարող է անհրաժեշտ բեռնափոխադրման ծավալներ ապահովել Պարսից ծոց–Սեւ ծով տրանսպորտային հանգույցի սպասարկման շնորհիվ՝ կապելով այս երկու տարածաշրջանները մեկ ընդհանուր երկաթուղային գծով: Սակայն նման արդյունքի համար Հայաստանն ու Իրանն առաջիկա տարիներին պետք է ակտիվ բանակցություններ վարեն այն տարածաշրջանային պետությունների հետ, որոնք կարող են օգտագործել նոր երկաթուղին. Հնդկաստան, Պակիստան, Վրաստան, Ուկրաինա, Ռումինիա, Ռուսաստան, Բուլղարիա եւ այլն: Այս գործընթացը բարդ եւ երկար է լինելու, սակայն որի դրական ավարտի համար բավարար հիմքեր կան:

* * *

Առաջիկայում Իրանի դեմ կարող են կիրառվել նոր պատժամիջոցներ՝ կապված նրա միջուկային ծրագրի հետ: Խոսվում այն մասին, որ դրանք կարող են ազդել ՀՀ–Իրան հարաբերությունների վրա: Սակայն պատժամիջոցների այն փաթեթը, որի նախնական տարբերակը դրված է քննարկման, չի անդրադառնում ՀՀ–Իրան համագործակցության հիմնական ոլորտների վրա՝ էներգետիկա, առեւտուր եւ տարանցիկ բեռնափոխադրումներ: Հնարավոր պատժամիջոցները կկիրառվեն, ամենայն հավանականությամբ, գիտատար ոլորտներում Իրանի հետ համագործակցության, ինչպես նաեւ Իրան բարձր տեխնոլոգիաներ ներմուծելու ուղղությամբ: Երկու ուղղություններն էլ էական տեղ չեն զբաղեցնում ՀՀ–Իրան համագործակցության մեջ: Այսպիսով, դրանք որեւէ լուրջ ազդեցություն չեն ունենա Հայաստան–Իրան հարաբերությունների վրա:

ԿՐՈՆԱՓՈԽ ՀԱՅԵՐԻ ՍԵՐՈՒՆԴՆԵՐ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ

Ռուբեն Մելքոնյան

Բռնի իսլամացված հայերի եւ նրանց սերունդների խնդրի ուսումնասիրությանը զուգահեռ ի հայտ են գալիս նրանց աշխարհագրական սփռվածությանը վերաբերող նոր եւ հետաքրքիր մանրամասներ: Մասնավորապես՝ Թուրքիայի կրոնափոխ հայերի թեմայի ուշագրավ եւ, միեւնույն ժամանակ, յուրահատուկ մասն է կազմում ներկայումս Եվրոպայում բնակվող իսլամացված հայերի սերունդների հարցը: Հայտնի է, որ ընդհանրապես կրոնափոխ հայության ներկայիս վիճակի մասին տվյալները, փաստերը շատ քիչ են, եւ եթե վերջին տարիներին Թուրքիայի իսլամացված հայերի մասին որոշ տվյալներ ի հայտ են գալիս, ապա Եվրոպայում բնակվողների վերաբերյալ նյութերն անհամեմատ ավելի քիչ են: Միայն վերջերս օտարազգի եւ հայ որոշ հեղինակներ սկսել են անդրադառնալ այս խնդրին եւ փոխանցել որոշ տեղեկություններ, որոնք, առավելապես, ունեն նկարագրական բնույթ:

Նախ, անդրադառնանք կրոնափոխ հայերի Եվրոպա տեղափոխվելու խնդրին եւ փաստենք, որ 1950-ական թվականների վերջերին Եվրոպայում ու մասնավորապես՝ Գերմանիայում առաջանում է էժան աշխատուժի կարիք եւ այդ պատճառով մի շարք երկրների հետ կնքվում են արտագնա աշխատավորների մասին պայմանագրեր: Թուրքիայի եւ Գերմանիայի միջեւ նմանատիպ պայմանագիր է կնքվում 1961թ., որից հետո սկիզբ է առնում Թուրքիայի հազարավոր բնակիչների արտագաղթը դեպի Գերմանիա, իսկ հետագայում՝ նաեւ Եվրոպայի այլ երկրներ: Հենց այս արտագաղթի հետեւանքով է այսօր Եվրոպայում ձեւավորվել մի քանի միլիոնի հասնող թուրքական համայնքը: Համաձայն որոշ տվյալների, Թուրքիայից արտագաղթողների մեջ եղել են նաեւ հայեր, ընդ որում՝ ինչպես բացահայտ քրիստոնյա, այնպես էլ կրոնափոխ կամ ծպտյալ: Կրոնափոխ հայերը եւ նրանց սերունդները մի քանի տասնամյակների ընթացքում գաղթել եւ հաստատվել են Գերմանիայի, Բելգիայի, Հոլանդիայի, Շվեդիայի, Ֆրանսիայի տարբեր բնակավայրերում, եւ այսօր նշյալ երկրներում կան կրոնափոխ հայության սերունդներից կազմված համայնքներ կամ համայնքատիպ կառույցներ:

Տեղափոխվելով աշխարհագրական նոր միջավայր՝ կրոնափոխ հայերի եւ նրանց սերունդների շրջանում սկիզբ են առել որոշակի

գործընթացներ ու երեւույթներ, որոնք կապված են իրական ինքնությանը վերադառնալու հետ: Եվրոպաբնակ կրոնափոխ հայության շրջանում ամենատարածված եւ ուշագրավ երեւույթը, անշուշտ, կրոնադարձությունն է՝ քրիստոնեության վերընդունումը: Եվ այսօր Եվրոպայի կրոնափոխ հայերի մեջ ակունքներին վերադարձածների թիվը բավական մեծ է: Ինչպես փոխանցում են մի շարք աղբյուրներ, կրոնադարձության, արմատների որոնման գործընթացը տարբեր զարգացումներ է ունեցել եւ այսօր էլ շարունակվում է: Մասնավորապես՝ քրիստոնեություն ավելի արագ վերընդունել են ծպտյալ հայերը, որոնք ամեն բարենպաստ առիթ օգտագործել են ակունքներին վերադառնալու համար եւ Եվրոպա տեղափոխվելուց կարճ ժամանակ անց կամ անմիջապես հետո ընդունել են քրիստոնեություն: «Յոյս» երկշաբաթաթերթի վերջին համարներից մեկում Թամար Գեւոնյանը մեջբերում է մի պատմություն, համաձայն որի՝ Թուրքիայից Գերմանիա տեղափոխված արտաքուստ մուսուլման երեւացող մի խումբ մարդիկ հենց մաքսատանն ինքնաբացահայտվում են եւ պաշտոնյային ներկայացնում ոչ թե անձնագրերում առկա մուսուլմանական, այլ՝ հայկական անուններ: Այս ուշագրավ օրինակը ցույց է տալիս տասնամյակներ թաքցրած իրական ինքնությանը վերադառնալու ցանկությունը: Ինչպես նշում է նույն աղբյուրը, վերոհիշյալ հայերն այսօր Գերմանիայում համայնք եւ եկեղեցի ունեն:

Տարբեր աղբյուրներ փաստում են, որ այսօր Եվրոպայում բնակվող եւ քրիստոնեություն վերընդունած հայերը կրոնի հարցում շատ ավելի ջերմեռանդ են: Այստեղ կա նաեւ հոգեբանական կողմ, այն է՝ շրջապատին ապացուցել հայկականության հանդեպ իրենց հավատարմությունը: Իրական ինքնությանը վերադարձած հայերի շրջանում նկատվում են նաեւ որոշ հոգեբանական եւ հոգեկան խնդիրներ: Ոմանք անգամ բուժման կուրսեր են անցել հոգեբան-բժիշկների մոտ. վերջիններիս ախտորոշումը եղել է այն, որ կրոնադարձ հայերի հոգեվիճակի մեջ կարեւոր եւ որոշիչ դեր են ունեցել Հայոց ցեղասպանության տրավմատիկ հիշողությունները, տասնամյակներով ապրած վախի ու սպառնալիքի մթնոլորտը եւ այն, որ շարունակ թաքցրել են իրական ինքնությունը:

Այսօր Գերմանիայի տարբեր քաղաքներում կան կրոնադարձ հայերի խմբեր, որոնց մի մասը ինտեգրված է տեղի այլ հայերի հետ, իսկ մի մասը խորթության հանդիպելով հին համայնքի կողմից՝ շարունակում է վարել մեկուսի կենսակերպ եւ համայնքային կյանքից դուրս է մնում:

Գերմանաբնակ թուրք գրող Քեմալ Յալչընը բազմաթիվ փաստեր է ներկայացնում Եվրոպայում ապրող կրոնափոխ հայերի մասին եւ մեզ

ուղարկած իր նամակում նշում է. *«Ես Գերմանիայում մարդկանց գիտեմ, որոնք առաջացած տարիքում անգամ վերընդունում են քրիստոնեություն եւ մկրտվում»*: Հայ Առաքելական եկեղեցու Գերմանիայի թեմի առաջնորդ Գարեգին արքեպիսկոպոս Բեքչյանը եւս անդրադառնում է խնդրին եւ որոշ հետաքրքիր փաստեր ներկայացնում:

Գերմանիայի Վիսբադեն քաղաքում, ըստ Համո Մոսկոֆյանի, կա կրոնափոխ հայերի ռեստորան-հավաքատեղի, որը կոչվում է «Անի»: Հիշյալ քաղաքում ապրում են նաեւ կրոնադարձված մի խումբ հայեր, որոնցից, օրինակ՝ Նուրեդդին Գյունդենը, որը վերանվանվել է Սիմոն, պնդում է, թե սերում է մեծ ֆիդայի Հրայր Դժոխքի տոհմից:

Բելգիայում բնակվող կրոնադարձ հայերի մասին հետաքրքրական հոդվածով է հանդես եկել Դավիթ Զենյանը, համաձայն որի՝ հիմնականում Շըրնաքից եւ Սիլոպից գաղթած քրդացած-քրդախոս հայերն այսօր վերադառնալով իրենց ինքնությանը՝ կազմում են տեղի առաքելական համայնքի հիմքը եւ հանդես գալիս որպես ջերմեռանդ քրիստոնյաներ: Նրանց երեխաները սովորում են հայերեն, եւ այդ միջոցով մայրենիին են սկսում տիրապետել նաեւ ծնողները: Բրյուսելի քրդացած կամ քրդախոս հայերի համայնքի կարեւոր դեմքերից եւ հիմնադիրներից Մեսրոպ Աֆշարը, պատմելով հայրենիքում իրենց վիճակի մասին, նշում է. *«Վախը եւ ճնշվածության զգացումը մեր մշտական ուղեկիցներն էին: Ճնշումները շատ էին, բայց մեր մեծերը մշտապես հիշեցնում էին մեզ, որ չնայած լեզվի կորստին՝ մենք հայ ենք»*: Աֆշարը Թուրքիայում իրենց կենսակերպի մասին որոշ մանրամասներ է պատմում, որոնցից պարզ է դառնում, որ նրանք ծպտյալ հայեր են եղել եւ գաղտնի շարունակել են քրիստոնեական սովորույթները, ասորի քահանայի միջոցով գաղտնի մկրտել իրենց երեխաներին, կատարել հարսանյաց, թաղման քրիստոնեական արարողություններ: Ինչպես շատ վայրերում, այնպես էլ Շըրնաքում վերապրած ծպտյալ հայերն ունեցել են կրկնակի անձնանուններ՝ տան եւ դրսի համար: Մեսրոպ Աֆշարն այս մասին պատմում է. *«Մերոնց շրջապատում մենք հայեր էինք: Մկրտելիս մեր երեխաներին տալիս էինք հայկական անուններ, օրինակ՝ Սարգիս, Դավիթ, Նուբար, Գեւորգ եւ Սարո, բայց արտաքին միջավայրում մենք նման էինք քաղաքի մնացած բնակիչներին: Մենք կրում էինք քրդական անձնանուններ, օրինակ՝ Էուզ, Յալիք, Օդեմիշ, Բիրջին»:*

Ավելորդ չէ նշել, որ հայերի այս խմբի փրկության եւ հայկականության վերադարձի մեջ եւս լուրջ դեր է ունեցել Պոլսո պատրիարք, լուսահոգի Շնորհք Գալուստյանը, ում ջանքերով 1960-ականների կեսերին հայության այս բեկորները նախ սկսել են Շըրնաքից եւ Սիլոպից տեղափոխվել

Ստամբուլ, իսկ այնուհետեւ՝ 1980-ականներին, Բելգիա, Ֆրանսիա, Հոլանդիա:

Ինչպես վերը նշվեց, այսօր կրոնադարձված հայերի խմբեր կան նաեւ Շվեդիայում, որոնցից է ծնունդով Ադանայից Սուլեյման Ֆարուքը, որը, գտնելով իր իրական ինքնությունը, ընդունել է քրիստոնեություն եւ փոխել անունը՝ դառնալով Հայկ Արամյան: Նա մեկն է բազմահազար ուծացած հայերից, որոնք ապրում են թուրքի կամ քրդի արտաքին ինքնության քողի տակ: Դեռ մանկուց կասկածներ ունենալով իր ինքնության շուրջ՝ նա որոնել է իր արմատները եւ 1983թ. Դամասկոսում տեղի հայկական եկեղեցում մկրտվել, իսկ երկու տարի անց՝ 1985թ. տեղափոխվել ու հաստատվել է Շվեդիայում: Իր ինքնության մասին նա նշում է. *«Ներքուստ ես միշտ զգում էի, որ ուրիշ եմ: Ես կարող էի քուրդ մնալ, բայց ես այլ կերպ որոշեցի»:* Հաստատվելով Ստոկհոլմում՝ Հայկ Արամյանն ամուսնացել է այնտեղ բնակվող դիարբեքիրցի հայուհու հետ, իսկ իր երկու զավակներին անվանել Մասիս եւ Անի: Երեխաները, ի դեպ, սովորել եւ տիրապետում են հայերենին: Հատկապես ուշագրավ է, որ ակունքներին վերադարձած Հայկ Արամյանը ձգտում է իր երեխաների մեջ արմատավորել ու էլ ավելի վառ պահել հայկականության զգացումը եւ այդ նպատակով նրանց մի քանի անգամ արդեն բերել է Հայաստան, մասնավորապես՝ նաեւ Արցախ: Նա նշում է. *«Ես այնքան շատ բան էի բաց թողել, ես ուզում եմ, որ իմ երեխաները մեծանան՝ իմանալով, թե իրենք ով են: Ես ուզում եմ, որ իմ որդին հպարտանա իր հայկական ծագումով»:*

Այսօր Արամյանը շվեդահայ համայնքի ակտիվ անդամներից է: Հարկ է նշել, որ Հայկի ընտանիքի մի մասը մնացել է Ադանայում, այսինքն՝ կա այնտեղ հալածվելու վախը, ինչը, սակայն, չի կարողացել խոչընդոտել նրան իրական ինքնությանը վերադառնալու համար: Ավելին՝ մի քանի տարի առաջ Շվեդիա է տեղափոխվել նաեւ նրա եղբայրը եւ կրկին վերադարձել արմատներին՝ ընդունելով Արամ անունը:

Նշենք, որ եվրոպաբնակ այս հայերը խնդիրներ ունեն ինքնությունը բացահայտելու հարցում, քանի որ նրանց ազգականները ներկայումս էլ բնակվում են Թուրքիայում եւ կարող են դառնալ հալածանքի թիրախ, ուստի եւ երբեմն նրանք կողմ չեն շատ բաց արտահայտվելուն: Կան ընտանիքներ, որոնք կրոնադարձվելուց հետո որոշակի անհանգստություն ունենալով Թուրքիայում մնացած ազգականների համար՝ այդքան էլ բացահայտ չեն խոսում վերագտած ինքնության մասին եւ անգամ կյանքի երկակի բնույթ ունեն: Նմանատիպ մի օրինակ է Հոլանդիայում հաստատված դիարբեքիրցի Մերջանյանների ընտանիքը. նրանք 1970-ականներին

Ամստերդամ տեղափոխվելուն պես վերընդունել են քրիստոնեություն, սակայն այսօր էլ Դիարբեքիրում ունեն ազգականներ: Ինչպես նշում է թուրք հետազոտող Ուղուր Ունգորը. *«Այսօր, երբ նրանք այցելում են Դիարբեքիրում մնացած իրենց ազգականներին, Եվրոպայի եւ Թուրքիայի միջեւ ինքնաթիռային թռիչքների ժամանակ կարելի է ականատես լինել մի կրոնից մյուսին անցման յուրահատուկ դրսեւորման. կանայք արդեն ինքնաթիռում գլուխները ծածկում են գլխաշորով, հայկական անունների փոխարեն օգտագործում մուսուլմանական անուններ եւ Դիարբեքիրում իրենց պահում են մուսուլմանների պես»:*

Ամփոփելով՝ նշենք, որ եվրոպաբնակ կրոնադարձ հայերի թեմայի ուսումնասիրությունն ունի ոչ միայն գիտական կարեւորություն, այլեւ խիստ այժմեական ու գործնական նշանակություն:

ՍԻՐԻԱՅԻ ՀԱՅ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ

Վահրամ Հովյան

Սիրիայի հայ ավետարանական համայնքը տեղի հայության դավանանքային երեք շերտերից մեկն է՝ հայ առաքելական եւ կաթողիկե համայնքների հետ միասին: Հայ ավետարանականների կազմակերպվածությունն ու ակտիվությունը հաշվի առնելով՝ հարկ է ուշադրություն դարձնել նրանց գործունեության վրա:

Սիրիայի գլխավոր հայ ավետարանական համայնքը գտնվում է Հալեպում, որն ավանդաբար եղել է ամենահայահոծ բնակավայրը Սիրիայում: Լինելով Սիրիայի ընդհանուր հայ համայնքի կենտրոնը կամ «մայրաքաղաքը»՝ Հալեպը միաժամանակ նաեւ հայ ավետարանական համայնքի կենտրոնը կամ «մայրաքաղաքն» է: Այստեղ է գտնվում հայ ավետարանականների հիմնական ղեկավար կառույցը՝ Հայ ավետարանական համայնքի գրասենյակը, որը գլխավորում է համայնքապետ, վերապատվելի Հարություն Սելիմյանը: Ներկայումս Հալեպն ինչ-որ իմաստով կարելի է համարել համաշխարհային հայ ավետարանականության կենտրոնը, քանի որ վերապատվելի Հարություն Սելիմյանը միաժամանակ նաեւ Հայ ավետարանական համաշխարհային խորհրդի նախագահն է: Բացի Հայ ավետարանական համայնքի գրասենյակից, Հալեպում է գտնվում նաեւ Սիրիայի հայ ավետարանական եկեղեցիների, կրթական եւ այլ հաստատությունների մեծ մասը:

Հայ ավետարանական համայնքներ կան նաեւ Սիրիայի այլ հայաշատ բնակավայրերում՝ մայրաքաղաք Դամասկոսում, Քեսապում, Հոմսում եւ այլուր:

Սիրիայի հայ ավետարանական համայնքը բնութագրվում է հետեւյալ հատկանիշներով.

❖ Այն աշխարհում առաջին հայ ավետարանական համայնքներից է եւ այդ իմաստով անցել է պատմական զարգացման որոշակի փուլեր:

❖ Ունի կազմակերպվածության բավական բարձր մակարդակ, ինչը թույլ է տալիս դրսեւորել նշանակալի ակտիվություն: Դրա վառ արտահայտությունը նրա կազմակերպական կառույցների առատությունն է ու բազմազանությունը, որոնք տարբեր բնագավառներում ծավալում են ակտիվ գործունեություն:

❖ Մեկուսացված չէ հայ առաքելական եւ կաթողիկե համայնքներից,

այլ նրանց հետ միասին կազմում է մեկ միասնական ամբողջություն՝ սիրիահայ համայնքը: Դրա լավագույն վկայություններն են.

1. Ավետարանական կառույցների գործունեության տարածումը ողջ սիրիահայ համայնքում:

2. Միջդավանական սերտ համագործակցությունը հայ առաքելական եւ կաթողիկե համայնքների հետ:

Պատմական ակնարկ

Ձեւավորվելով 19-րդ դարի կեսին եւ լինելով առաջին հայ ավետարանական համայնքներից մեկը՝ Սիրիայի հայ ավետարանական համայնքն անցել է պատմական զարգացման որոշակի էվոլյուցիա: Այս համայնքի պատմությունը բաժանվում է երկու փուլի.

❖ *նախացեղասպանական՝* 19-րդ դարի կեսից մինչեւ Հայոց ցեղասպանությունը,

❖ *հետցեղասպանական՝* Հայոց ցեղասպանությունից մինչեւ մեր օրերը:

1. Նախացեղասպանական շրջան: Սիրիայում հայ ավետարանական համայնքներ ձեւավորվել են 19-րդ դարի կեսին, երբ այդ երկիրը մաս էր կազմում Օսմանյան կայսրության: Օսմանյան կայսրության հայության շրջանում տարածում ստացող բողոքականությունն անմասն չթողեց նաեւ Սիրիայի հայերին, որոնք բնակվում էին հիմնականում Հալեպում եւ Քեսապում: Այստեղ էլ ձեւավորվեցին Սիրիայի առաջին հայ ավետարանական համայնքները: Հալեպում Հայ Ավետարանական եկեղեցի հիմնադրվեց 1852թ., Քեսապում՝ 1853թ.:

Նախացեղասպանական շրջանում հայ ավետարանականության գործունեությունն ընդգրկում էր հիմնականում երկու բնագավառ՝ հոգեւոր-եկեղեցական եւ կրթական: Ավետարանական եկեղեցիներին կից գործում էին դպրոցներ:

2. Հետցեղասպանական շրջան: Հայոց ցեղասպանության հետեւանքով բազմահազար հայեր, այդ թվում նաեւ՝ ավետարանականներ Արեւմտյան Հայաստանից եւ Կիլիկիայից գաղթեցին եւ հաստատվեցին Սիրիայում, ինչը հանգեցրեց ինչպես տեղի հայ ավետարանական համայնքների ստվարացմանը, այնպես էլ նորերի ձեւավորմանը: Հալեպից եւ Քեսապից բացի հայ ավետարանական համայնքներ ձեւավորվեցին նաեւ Սիրիայի մայրաքաղաք Դամասկոսում եւ Եղեռնի հետեւանքով հայաշատ դարձած այլ բնակավայրերում:

Հայոց ցեղասպանության հետեւանքով առաջացած մարտահրավերները, ինչպես նաեւ Սիրիայի անկախացման արդյունքում առաջ եկած ազատություններն ընդլայնեցին հայ ավետարանական համայնքի գործունեության շրջանակները: Հոգեւոր-եկեղեցական եւ կրթական ոլորտներին ավելացան սոցիալականը, մշակութայինը եւ այլն, ինչը ենթադրում է նաեւ կազմակերպական կառույցների ընդլայնում թե՛ քանակական, թե՛ տեսակային (բազմազանության) առումներով:

Սիրիայի հայ ավետարանական համայնքի պատմության վերոհիշյալ երկու փուլերի համեմատական վերլուծությունը թույլ է տալիս ընդգծել դրանց հետեւյալ հիմնական առանձնահատկությունները.

❖ Եթե նախացեղասպանական փուլում Սիրիան Օսմանյան կայսրության մաս էր կազմում եւ, հետեւաբար, տեղի հայ ավետարանական համայնքն էլ գտնվում էր թուրքական պետության շրջանակներում, ապա հետցեղասպանական փուլում, երբ Սիրիան արդեն ձեռք էր բերել անկախություն, տեղի հայ ավետարանական համայնքը գտնվում եւ գործում էր անկախ Սիրիայի կազմում, որտեղ նրա համար կային գործունեության ավելի ազատ պայմաններ:

❖ Եթե նախացեղասպանական փուլում Սիրիայի հայ ավետարանական համայնքը թե՛ քանակապես եւ թե՛ աշխարհագրական սփռվածության առումով փոքր էր, ապա Հայոց ցեղասպանության հետեւանքով այն ընդլայնվեց: Նախացեղասպանական շրջանում Սիրիայի հայ ավետարանական համայնքն ընդգրկում էր հիմնականում Հալեպն ու Քեսապը: Հետցեղասպանական շրջանում հայ ավետարանական համայնքներ ձեւավորվեցին նաեւ Դամասկոսում եւ Սիրիայի հայաշատ դարձած այլ վայրերում:

❖ Նախացեղասպանական շրջանում Սիրիայի հայ ավետարանական համայնքի գործունեությունն ընդգրկում էր հիմնականում եկեղեցական եւ կրթական ոլորտները. հետցեղասպանական շրջանում նրա գործունեության շրջանակներն ընդլայնվեցին՝ ընդգրկելով նաեւ սոցիալական, մշակութային եւ այլ բնագավառներ:

❖ Նախացեղասպանական շրջանում հայ ավետարանական համայնքի կազմակերպական կառույցները միայն եկեղեցական եւ կրթական բնույթի էին. երկրորդ փուլում դրանք, քանակապես ընդլայնվելով, միաժամանակ ընդլայնեցին իրենց բազմազանությունը:

Կազմակերպական կառույցները

Սիրիայի հայ ավետարանական համայնքն աչքի է ընկնում կազմակերպական կառույցների առատությամբ եւ բազմազանությամբ: Դրանք կարելի է բաժանել չորս մասի. ղեկավար, եկեղեցական, կրթական, սոցիալական:

1. Ղեկավար կառույցները Սիրիայի հայ ավետարանական համայնքում երկուսն են՝ Հայ ավետարանական համայնքի գրասենյակը եւ Հայ ավետարանական կրթական խորհուրդը: Երկու հաստատություններն էլ գտնվում են Հալեպում եւ զբաղվում են կազմակերպչական գործունեությամբ: Երկուսն էլ գլխավորում է Սիրիայի հայ ավետարանականների համայնքապետ, վերապատվելի Հարություն Սելիմյանը:

2. Եկեղեցական կառույցները Սիրիայի հայ ավետարանական համայնքում ստեղծվել են 19-րդ դարի կեսին՝ հայ ավետարանական համայնքի ձեւավորմանը զուգընթաց: Առաջին Հայ Ավետարանական եկեղեցիները՝ Հալեպի Հայ Ավետարանական Էմմանուել եկեղեցին եւ Քեսապի Հայ Ավետարանական Սուրբ Երրորդություն եկեղեցին, հիմնադրվել են համապատասխանաբար 1852թ. եւ 1853թ.:

Ներկայումս Սիրիայի հայ ավետարանական համայնքն ունի 11 եկեղեցի, որոնց գերակշիռ մեծամասնությունը կենտրոնացված է ավանդական հայ ավետարանական համայնքներում՝ Հալեպում (5) եւ Քեսապում (4): Մեկական Հայ Ավետարանական եկեղեցիներ կան նաեւ Դամասկոսում եւ Հոմսում:

3. Կրթական հաստատությունները Սիրիայի հայ ավետարանական համայնքում դպրոցներն են: Դրանց քանակը ներկայումս 6-ն է: Կրթական հաստատությունների գերակշիռ մեծամասնությունը՝ 4 հատ, կենտրոնացված է Հալեպում: Մեկական դպրոց կա Դամասկոսում եւ Քեսապում:

4. Սոցիալական կառույցները Սիրիայի հայ ավետարանական համայնքում 8-ն են: Դրանք նույնպես գլխավորապես կենտրոնացված են Հալեպում (7): Սոցիալական կառույցներից միայն մեկը՝ Հայկական քրիստոնեական ջանից ամառային ճամբարն է գտնվում Հալեպից դուրս՝ Քեսապում:

Սիրիայի հայ ավետարանական համայնքի սոցիալական կառույցները բարեգործական, առողջապահական, երիտասարդական եւ այլ բնույթի հաստատություններ են: Դրանցից են, օրինակ, Ջինիշյան հիշատակի ձեռնարկի Սիրիայի մասնաճյուղը, Հովարդ Կարագյոզյան հաստատության Սիրիայի մասնաճյուղը, Քրիստոնեական ջանից երիտասարդական կենտրոնը եւ այլն:

Սիրիայի հայ ավետարանական համայնքի կազմակերպական կառույցների գործունեությունը չի սահմանափակվում միայն նեղ ավետարանական համայնքի շրջանակներում: Այն ընդգրկում է ողջ սիրիահայ համայնքը՝ անկախ դավանանքային տարբերություններից, ինչը վկայում է Սիրիայի հայ ավետարանականների՝ ողջ սիրիահայության մեջ ինտեգրվածության եւ նրա անբաժանելի մասը լինելու մասին:

Անգամ եկեղեցական կառույցների գործունեությունն է տարածվում ոչ միայն ավետարանականների վրա. Սիրիայի Հայ Ավետարանական եկեղեցիների այցելուների թվում են նաեւ հայ առաքելականները: Ըստ ավետարանական հոգեւորականների՝ գլխավորը քրիստոնեական հավատքն է, դավանանքը երկրորդական նշանակություն ունի:

Մեկ այլ բնագավառի օրինակ. սոցիալական կառույցների գործունեությունից չի կարող օգտվել միայն նեղ ավետարանական համայնքը, քանի որ դրանք ստեղծվել են ծանր կացության մեջ գտնվող սիրիահայերին օգնելու նպատակով: Սոցիալական կառույցների գործունեությունը չի կարող սահմանափակվել միայն նեղ ավետարանական համայնքի շրջանակներում նաեւ այն պատճառով, որ դրանցից որոշները տնօրինվում են Սիրիայի հայկական երեք հարանվանությունների կողմից:

Միջդավանական համագործակցությունը

Սիրիայի հայ ավետարանական համայնքի՝ ողջ սիրիահայության անբաժանելի մասը լինելու վառ արտահայտությունն են նաեւ հայ առաքելական եւ կաթողիկե հարանվանությունների հետ նրա սերտ շփումներն ու համագործակցությունը: Միջդավանական համագործակցությունը դրսեւորվում է երկու մակարդակով.

❖ *Անհատական,* երբ ակտիվ շփման եւ գործակցության մեջ են գտնվում երեք հարանվանությունների առանձին անհատներ:

❖ *Ինստիտուցիոնալ,* երբ շփումներն ու համագործակցությունը տեղի են ունենում Հայ առաքելական, կաթողիկե եւ ավետարանական համայնքների միջեւ՝ նրանց ինստիտուցիոնալ կառույցների միջոցով:

Անհատական համագործակցությունը դրսեւորվում է հետեւյալ հիմնական ձեւերով.

1. Համազգային կառույցներում երեք հայ հարանվանությունների ներկայացուցիչների ընդգրկվածությունն ու համատեղ գործունեությունը:

2. Աշխարհիկ կարգի հարաբերություններում եւ գործունեության բնագավառներում դավանանքային տարբերությունների դերի ու նշանակության բացակայությունը: Այդ կարգի հարաբերություններում եւ

գործունեության ոլորտներում ընդգրկվում են ինչպես առաքելական, այնպես էլ կաթողիկե եւ ավետարանական հայերը:

Ինստիտուցիոնալ մակարդակով միջդավանական համագործակցության դրսեւորման ձեւերն են.

1. Համատեղ միջոցառումների կազմակերպումն ու իրականացումը:
2. Մեկ համայնքի կողմից կազմակերպվող միջոցառումներին մյուսների մասնակցությունը:
3. Համազգային միջոցառումներին երեք հարանվանությունների մասնակցությունը:
4. Կառույցների համատեղ հիմնումը եւ դրանց համատեղ տնօրինումը:

Ինստիտուցիոնալ մակարդակով միջդավանական համագործակցությունն ակտիվորեն դրսեւորվում է հիմնականում քաղաքական եւ սոցիալական բնագավառներում:

1. Քաղաքական ասպարեզում Սիրիայի հայ երեք հարանվանությունների միջեւ համագործակցությունը նպատակաուղղված է համազգային խնդիրների լուծմանը: Այս տեսակետից բացառիկ նշանակություն ունի Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման եւ դատապարտման համար մղվող պայքարը: Այս հարցում Հայ Առաքելական, Կաթողիկե եւ Ավետարանական եկեղեցիների միջեւ առկա են սերտ համագործակցություն եւ փոխըմբռնում:

Համազգային միջոցառումներին համատեղ մասնակցության ակնառու օրինակ էր այն, որ 2010թ. ՀՀ նախագահ Ս.Սարգսյանի՝ Սիրիա կատարած այցելության ընթացքում Հայ առաքելական, կաթողիկե եւ ավետարանական համայնքների առաջնորդները միասնաբար ուղեկցում էին ՀՀ նախագահին եւ համատեղ մասնակցում նախագահի այցի ընթացքում նախատեսված միջոցառումներին:

2. Սոցիալական ոլորտը շատ կարեւոր տեղ ունի միջդավանական համագործակցության մեջ: Այստեղ համագործակցությունը դրսեւորվում է սոցիալական կառույցների համատեղ հիմնադրմամբ եւ տնօրինմամբ: Այդպիսի սոցիալական կառույցներից են Ջինիշյան հիշատակի ձեռնարկի Սիրիայի մասնաճյուղը, Արեւիկ կենտրոնը եւ այլն:

«ՍՈՒՆՆԻԱԿԱՆ ԽՆԴԻՐՆ» ԱԴՐԲԵՋԱՆՈՒՄ

Արաքս Փաշայան

Վերջին շրջանում Ադրբեջանի իշխանությունները բավական կոշտ միջոցառումներ են ձեռնարկում իսլամական (թե՛ շիա, թե՛ սուննի) կրոնական որոշ կառույցների եւ համայնքների դեմ, որի հետեւանքով քանդվել կամ անորոշ ժամանակով փակվել են բազմաթիվ մզկիթներ, օրենքից դուրս են համարվել մի շարք կրոնական համայնքներ, հետապնդումներ եւ հալածանքներ են իրականացվել բազմաթիվ կրոնական ակտիվիստների նկատմամբ: Իշխանությունների նման գործողությունների համար իրավական հենք դարձավ 2009թ. Ադրբեջանի խորհրդարանի կողմից «Կրոնի դավանման ազատության մասին» փոփոխված օրենքը, համաձայն որի՝ մինչեւ 2010թ. հունվարի 1-ը կրոնական կառույցները պետք է վերագրանցվեն, այլապես օրենքից դուրս կհամարվեն: Վերագրանցման գործընթացը հանձնվեց Կովկասի մուսուլմանների վարչությանը, որը սերտորեն համագործակցում է Կրոնական կազմակերպությունների հետ աշխատանքի պետական կոմիտեի հետ: Բացի այդ, արտերկրում աստվածաբանական կրթություն ստացած անձանց արգելվեց իսլամական կրոնական արարողություններ վարելը:

Պատմականորեն Ադրբեջանում տարածում ունեն իսլամի երկու ավանդական ուղղությունները՝ շիականությունն ու սուննիականությունը: Ադրբեջանի առաջատար կրոնական ուղղությունը, սակայն, շիականությունն է, որն Ադրբեջանում ներկայացված է թե՛ պաշտոնական, թե՛ ոչ պաշտոնական ձեւաչափերով, ինչը ենթադրում է կրոնական իրողությունների նկատմամբ մոտեցումների տարբերություն: Կրոնական կյանքը համակարգում է Կովկասի մուսուլմանների վարչությունը (ԿՄՎ) ի դեմս շիա առաջնորդի՝ շեյխ ուլ-իսլամի, ով, ըստ ընթացակարգի, ունի սուննի տեղակալ (մուֆտի): Շիա են դավանում ազերիների զգալի մասը, թաթերը, թալիշները, քրդերի մի հատվածը, որոնք կազմում են Ադրբեջանի իսլամ բնակչության մոտ 65 տոկոսը: Սուննիադավան են լեզգիները, ավարները, ծախուրները, չեչենները, քրդերի եւ ազերիների մի մասը, որոնք կազմում են մոտ 35 տոկոս:

Սուննի իսլամը տարածաշրջան է ներթափանցել 7-րդ դարում, արաբական արշավանքների միջոցով: 16-րդ դարում Կովկասում Սեֆյան

Պարսկաստանի ազդեցության տարածումից հետո Ադրբեջանի ներկայիս տարածքում ամրապնդվեց նաեւ շիականությունը: 18-րդ դարում, ռուս-պարսկական պատերազմների շրջանում, սուննիներն իրենց թվաքանակով գերազանցում էին շիաներին: Սակայն 1813թ. Գյուլիստանի պայմանագրի ստորագրումից եւ Կովկասում ցարական Ռուսաստանի տիրապետության հաստատումից հետո Ադրբեջանի տարածքում սուննի տարրը, անվտանգության շարժառիթներով, սկսեց աստիճանաբար արտագաղթել Օսմանյան կայսրություն: Այդ հանգամանքը կապված էր սուննիների հակառուսական տրամադրությունների, Շամիլի բարձրացրած ապստամբության, նաեւ սուննիների եւ շիաների միջեւ առկա հակամարտության հետ: Արդյունքում՝ Ադրբեջանում ընդլայնվեց շիաների ազդեցությունը:

Սուննիականությունն Ադրբեջանում, արդեն հետխորհրդային շրջանում, նոր լիցքեր ստացավ հիմնականում թուրքական սուննի իսլամի եւ սալաֆիականության (կամ վահաբականության) հաշվին, որոնցից յուրաքանչյուրը ենթակա է իսլամական կրոնա-իրավական առանձին դպրոցների ազդեցությանը: Ադրբեջանում սուննի սալաֆիականությունը ներառում է գաղափարախոսական երկու հոսանք՝ ծայրահեղական (կամ ջիհադական) եւ արմատական, որոնց միջեւ ըստ էության առկա են որոշակի հակասություններ: Ծայրահեղականներն անմիջական կապ ունեն Դաղստանում եւ Չեչնիայում հակառուսական պայքարի մեջ ներքաշված ռազմաքաղաքական՝ ջիհադական կառույցների եւ ջամաաների հետ, որոնք առաջ են քաշում խալիֆայության ստեղծման գաղափարը: Նմանօրինակ մի կառույց է կովկասյան ծագմամբ «Անտառային եղբայրները», որ գործել է նաեւ Ադրբեջանի տարածքում, ունի ադրբեջանցի անդամներ: Կառույցը մեղադրվում է 2008թ. օգոստոսի 17-ին սալաֆիական Աբու Բաքր մզկիթում իրականացված ահաբեկչության կազմակերպման մեջ:

Մինչդեռ արմատական ուղղության ներկայացուցիչները հիմնականում խորքային հավատացյալներ են, իրենց համարում են «ճշմարիտ իսլամի» հետեւորդներ, աչքի են ընկնում կրոնական արմատական գաղափարներով, հավաքական ինքնությամբ, հնարավոր է՝ վահաբական արտաքինով: Նշված ուղղության ներկայացուցիչներից են, օրինակ, Աբու Բաքր մզկիթի համայնքի անդամները: Այս շարժումը հասարակության առանձին շրջանակներում մեծ ժողովրդականություն է վայելում: Սակայն պետությունն, ըստ ամենայնի, չի վստահում Աբու Բաքր համայնքի իմամի այն հավաստիացումներին, թե իրենք քաղաքականությանը չեն միջամտում: Պետությունն իրական վտանգ է տեսնում սուննի սալաֆիականությունից՝ մտավախություն ունենալով, որ Հյուսիսային Կովկասում

տեղի ունեցող գործընթացները կարող են ապակայունացնել իրավիճակը նաեւ Ադրբեջանում: Մեկ անգամ չէ, որ իշխանության ներկայացուցիչները նշել են, որ իրենք չեն ցանկանում, որպեսզի Ադրբեջանում կրկնվեն այն դեպքերը, որ տեղի են ունեցել Չեչնիայում, Դաղստանում, Ինգուշեթիայում:

Ադրբեջանի իշխանությունները, ընդհանուր առմամբ, ձգտում են թուլացնել կրոնի դերը հասարակական-քաղաքական կյանքում՝ հստակ գիտակցելով, որ իսլամը կարող է դառնալ ներքաղաքական կյանքն ապակայունացնող գործոն: Արդյունքում՝ իշխանությունը փորձում է հակազդել ոչ միայն կրոնական ծայրահեղականությանը, այլեւ առհասարակ՝ կրոնական ակտիվությանը:

Վերջերս Ադրբեջանի հասարակական առանձին շրջանակներում դժգոհությունների ալիք առաջացրեց որոշ մզկիթների փակման եւ քանդելու մասին իշխանությունների որոշումը: Մզկիթները քանդվում են տարբեր հիմնավորումներով՝ որպես անօրինական, ոչ անվտանգ կամ տեխնիկապես քանդման ենթակա: Դրանց մեջ կան նաեւ սուննիական մզկիթներ: 2008թ. օգոստոսին փակվեց Աբու Բաքր մզկիթը, քանի որ այնտեղ իրականացված ահաբեկչությունից հետո մզկիթը, ինչպես նշվեց, այլեւս անվտանգ չէ հավատացյալների համար: Հավատացյալներից շատերն Ադրբեջանում հավաքվում են նաեւ իմամի տանը, ինչն իսլամում ընդունված կարգ է:

2009թ. մայիսին փակվեցին թուրքական պետության միջոցներով կառուցված Շեհիդլարը՝ վերանորոգման պատճառաբանությամբ, ինչպես նաեւ Իլլահիյաթը՝ չգրանցված լինելու պատճառաբանությամբ: Առանձին տեսակետների համաձայն՝ այս մզկիթների փակումը կարող էր կապված լինել սկզբնավորվող հայ-թուրքական երկխոսության հետ:

2009թ. սեպտեմբերին վերանորոգման նպատակով փակվեց Գյանջայի միակ սուննիական՝ ջումա մզկիթը, որը նախկինում եղել էր քրիստոնեական եկեղեցի եւ հայտնի էր Աղվանական եկեղեցի անվամբ: Ըստ որոշ տեղեկությունների՝ իշխանությունները լուր են ունեցել մզկիթ հաճախող վահաբականների մասին: Մզկիթի մուեզինը հավատացյալների հետ ներկայումս աղոթում է իր տան այգում, իսկ մզկիթի իմամին՝ Իբրահիմովին, զարմացրել է այն փաստը, որ իշխանությունները կողպել են մզկիթի դուռն իսլամական ամենամեծ տոներից՝ Բայրամ Ռամադանից ընդամենը չորս օր առաջ:

Վերջերս իշխանությունները որոշել են փակել նաեւ Բաքվի հին քաղաքում՝ Իչերի Շեհերում գտնվող եւ պատմամշակութային արժեք ներկայացնող սուննիական մեկ այլ՝ Լեզգիական մզկիթը (այն 2000-ից

ներառված է ՅՈՒՆԵՍԿՕ-ի ցուցակում)՝ գրանցման հետ կապված խնդիրներ ունենալու համար: Մզկիթի համայնքի ղեկավար Մուստաֆա Ֆաիկի կարծիքով՝ սխալ է սուննիական մզկիթը գրանցելու համար դիմել ԿՄՎ, քանի որ սուննիներն ու շիաները տարբեր համայնքներ են, իսկ պետական կոմիտեում չկա սուննիական համայնքով զբաղվող բաժին: ԿՄՎ-ն հրաժարվել է գրանցել մզկիթը՝ պահանջելով նախ փոխել մզկիթի անունը, քանի որ այն չի կարող կոչվել էթնիկ տարբերանշանով՝ խորհուրդ տալով վերանվանել այն Աշուրբեկ (մզկիթը կառուցվել է 1169թ., Աշուր իբն Իբրահիմի կողմից): Ի դեպ, մզկիթ այցելում էին ոչ միայն լեզգիները: Այն Բաքվի կենտրոնում եւ ողջ Ադրբեջանում գործող թվաքանակով փոքրաթիվ սուննիական կենտրոններից մեկն էր, որ գործում էր լեզգիական Սամուր մշակութային կենտրոնին կից: Մզկիթի սուննի համայնքի ներկայացուցիչներն օգնություն են խնդրել Ռուսաստանի մուսուլմանների հոգեւոր վարչությունից, որը հազիվ թե միջամտի Ադրբեջանի ներքին կրոնական խնդիրներին:

Նշենք, որ 2010-ից իշխանությունները հալածանքներ են սկսել նաեւ նուրսիական խմբերի դեմ, որոնք գործում են Ադրբեջանի տարբեր շրջաններում, իրականացնում կրոնական, կրթական, լուսավորչական գործունեություն: Շարժումը հիմնվել է Թուրքիայում՝ քրդական ծագմամբ Սայիդ Նուրսիի կողմից, սուննիզմի եւ սուֆիզմի հենքի վրա:

Առանձին տեսակետների համաձայն՝ սուննիականությունն այսօր Ադրբեջանում լուրջ հարվածներ է ստանում: Սակայն շիական ակտիվիստ, մարդու իրավունքների պաշտպան Իլղար Իբրահիմօղլուի համոզմամբ՝ Ադրբեջանում խնդիրներ ունեն ոչ միայն սուննիները, այլեւ՝ առհասարակ մուսուլմանները: Նրա կարծիքով՝ Ադրբեջանի ներկա իշխանությունները տառապում են «մզկիթաֆոբիայով»:

Ադրբեջանցի վերլուծաբան, իսլամի գծով փորձագետ Արիֆ Յունուսովի համոզմամբ՝ նուրսիականների եւ իսլամական այլ շարժումների դեմ իշխանությունների հետապնդումները նպատակ ունեն պաշտոնապես ջարդել վերահսկողությունից դուրս գտնվող հասարակության վերջին շերտը: Ըստ նրա՝ Ադրբեջանում իշխանությունները, որոնք դառնում են ավելի ավտորիտար, սկզբում թիրախ դարձրեցին ընդդիմադիր քաղաքական կուսակցություններին, այնուհետեւ՝ ոչ կառավարական կազմակերպություններին, հետո՝ կրոնական շարժումներին:

Կասկածից վեր է, որ Ադրբեջանի իշխանությունները ձգտում են կրոնական դաշտից դուրս բերել կամ չեզոքացնել առանձին կրոնական համայնքների, այդ թվում՝ սուննիներին՝ ստեղծելով իսլամի՝ իրենց համար ընդունելի մի մոդել: Իշխանություններին մեծապես մտահոգում է

երկրում կրոնականացվածության եւ, մասնավորապես, սուննիական համայնքի՝ հասարակության առանձին շրջանակներում ունեցած ազդեցությունը: Իրենց հերթին, սուննիները, որպես դավանական փոքրամասնություն, բավական ցավագին են ընկալում իշխանական ճնշումները: Ավանդականորեն շիաների եւ սուննիների միջեւ առկա հակասությունները որոշ դեպքերում անդրադարձվում են նաեւ Ադրբեջանում՝ առանց վերաճելու խորքային հիմնահարցի: Հատկանշական է, սակայն, որ իշխանությունը շատ դեպքերում փորձում է սուննիներին նույնացնել վահաբականության հետ, ինչը սոցիալական ընդվզման հնարավորություն կարող է ստեղծել:

Ամեն պարագայում, Ադրբեջանի իշխանությունները ձգտում են օրենքի ուժով կասեցնել պետության համար ոչ ցանկալի մզկիթների, կրոնական կառույցների եւ համայնքների, ինչպես նաեւ կրոնական քարոզիչների գործունեությունը: Սակայն կրոնի նկատմամբ կոշտ մեթոդներով իրականացվող քայլերը կարող են նպաստել հասարակության առանձին շրջանակներում առավել արմատական տրամադրությունների ի հայտ գալուն, ինչին կխթանի Ադրբեջանում ավտորիտար վարչակարգի, խոսքի բացակայության, սոցիալ-տնտեսական բազմաթիվ դժվարությունների առկայությունը: Նման պայմաններում կարող է աճել կրոնի դերը: Իսլամիզմը, որը փորձում է լցնել առկա գաղափարախոսական բացը, կարող է դառնալ անվերահսկելի գործոն հասարակական-քաղաքական զարգացումներում՝ նպաստելով սոցիալական հուզումների դրսեւորմանը:

ՌՈՒՍԱՍՏԱՆ–ԱՄՆ. ՎԵՐԱԳՈՐԾԱՐԿՈՒՄԻՑ ՄԵԿ ՏԱՐԻ ԱՆՑ

Բենիամին Պողոսյան

2008թ. նոյեմբերին ԱՄՆ-ում կայացած նախագահական ընտրություններում Բարաք Օբամայի հիմնական կարգախոսը «փոփոխության» կոչն էր թե՛ ներքին եւ թե՛ արտաքին քաղաքականության ոլորտում: 2009թ. հունվարի 20-ին ստանձնելով ԱՄՆ նախագահի պաշտոնը՝ Օբաման ակտիվորեն ձեռնամուխ եղավ արտաքին քաղաքական նոր կուրսի իրականացմանը: Այստեղ ԱՄՆ նոր վարչակազմը զգալի կարեւորություն էր տալիս Ռուսաստանի հետ հարաբերությունների բարելավմանը, որոնք հատկապես Բուշ-կրտսերի նախագահության երկրորդ ժամկետի ընթացքում ծայրաստիճան լարվել էին, իսկ 2008թ. ռուս-վրացական պատերազմից հետո շատ վերլուծաբաններ դրանք բնութագրում էին «սառը պատերազմին» բնորոշ հատկանիշներով:

Ռուսաստանի հետ հարաբերություններում նոր փուլ սկսելու մտադրության մասին հստակ հայտարարեց ԱՄՆ պետքարտուղար Հիլարի Քլինթոնը 2009թ. մարտի 6-ին Ժնեւում Ռուսաստանի արտգործնախարար Սերգեյ Լավրովի հետ հանդիպման ժամանակ: Որպես հարաբերությունների բարելավումը խորհրդանշող եզր՝ ամերիկյան կողմն ընտրել էր «վերագործարկում» բառը, եւ հենց հանդիպման ժամանակ Քլինթոնը Լավրովին նվիրեց վերագործարկումը նշանավորող կոճակը:

Թե՛ ԱՄՆ-ի եւ թե՛ Ռուսաստանի իշխանությունների համար ակնհայտ էր, որ իրական վերագործարկման համար անհրաժեշտ է լուրջ տեղաշարժեր արձանագրել երկկողմ հարաբերություններում առավել մեծ տարաձայնությունների պատճառ հանդիսացող մի շարք խնդիրներում: Դրանցից առաջինը Իրանի հետ հարաբերությունների հարցն էր: Նախագահ Օբաման հայտարարել էր Իրանի հետ ուղղակի երկխոսություն սկսելու մտադրության մասին՝ հարաբերություններում առկա խնդիրները կարգավորելու նպատակով: Միաժամանակ ամերիկյան նոր վարչակազմը շեշտում էր, որ երկխոսության առաջարկից եւ ԱՄՆ-ի համար ընդունելի պայմաններով հարաբերությունների կարգավորումից հրաժարվելու դեպքում Իրանին լուրջ պատժամիջոցներ են սպառնում: Ակնհայտ էր, որ ՄԱԿ Անվտանգության խորհրդում նոր պատժամիջոցներ նախատեսող բանաձեւի ընդունման խնդրում ԱՄՆ-ը առաջին հերթին ուներ Անվտանգության

խորհրդի հիմնական անդամների, այդ թվում՝ Ռուսաստանի աջակցությունը:

Երկկողմ օրակարգի հաջորդ կարեւոր խնդիրը Արեւելյան Եվրոպայում հակահրթիռային պաշտպանության նոր համակարգ տեղակայելու Բուշ-կրտսերի վարչակազմի որոշումն էր եւ Ռուսաստանի խիստ բացասական դիրքորոշումն այդ հարցում:

ԱՄՆ–Ռուսաստան հարաբերություններում կարեւոր նշանակություն ուներ նաեւ ռազմավարական սպառազինությունների կրճատման մասին նոր պայմանագրի ստորագրումը, որը պետք է փոխարիներ 2009թ. դեկտեմբերի 5-ին ավարտվող նախորդ նմանատիպ համաձայնագրին:

«Վերագործարկման» կարեւոր բաղադրիչներից մեկն էլ հետխորհրդային տարածքում երկու պետությունների մրցակցության խնդիրն էր: 2008թ. օգոստոսի 31-ի հարցազրույցում Ռուսաստանի նախագահ Դմիտրի Մեդվեդեւը հայտարարել էր, որ Ռուսաստանը որոշակի տարածաշրջաններում արտոնյալ շահեր ունի, որոնց հետ միջազգային հանրությունը եւ առանձին պետությունները պարտավոր են հաշվի նստել: Ակնհայտ է, որ պաշտոնական Մոսկվան նկատի ուներ նախկին խորհրդային հանրապետությունները, որտեղ 2003–2005թթ. իրականացված գունավոր հեղափոխությունները համարում էր տարածաշրջանում Ռուսաստանի ազդեցությունը սահմանափակելու ԱՄՆ ջանքերի արդյունք: Կրեմլը հստակ հայտարարում էր, որ այլեւս մտադիր չէ հանդուրժել սեփական դիրքերի հետագա թուլացումը եւ Արեւմուտքի, առաջին հերթին ԱՄՆ ազդեցության հետագա ներթափանցումը կանխելու համար չի խուսափի նաեւ զինված ուժի կիրառումից:

ԱՄՆ–Ռուսաստան հարաբերություններում նոր մեկնարկ սկսելու գործընթացի սկիզբը 2009թ. ապրիլի 1-ին Լոնդոնում կայացած Օբամա–Մեդվեդեւ հանդիպումն էր: Այստեղ կողմերը վերահաստատեցին հարաբերություններին նոր շունչ հաղորդելու մտադրությունը: Հանդիպումից առաջ «Վաշինգտոն Փոստ» թերթում հրապարակվեց ռուս-ամերիկյան հարաբերություններին նվիրված Մեդվեդեւի հոդվածը, որտեղ վերջինս դրական էր արտահայտվում ամերիկյան նոր վարչակազմի՝ Ռուսաստանի հետ հարաբերությունները բարելավելու քաղաքականության վերաբերյալ: Երկկողմ բարձր մակարդակի շփումները շարունակվեցին 2009թ. հուլիսի 6-ին Մոսկվայում: ԱՄՆ եւ Ռուսաստանի նախագահները հանդիպումներ ունեցան նաեւ Նյու Յորքում 2009թ. սեպտեմբերի 24-ին եւ Սինգապուրում՝ 2009թ. նոյեմբերի 15-ին:

Վերլուծելով հարաբերությունների վերագործարկման մասին հայտարարությունից հետո անցած մեկ տարում ռուս-ամերիկյան հարաբե-

րություններում արձանագրված տեղաշարժերը, հարկ է ընդգծել, որ կողմերին հաջողվեց որոշակիորեն մեղմել հատկապես 2008թ. օգոստոսից հետո ստեղծված լարվածությունը եւ գոնե արտաքնապես հարաբերությունները տեղափոխել ավելի կառուցողական հուն:

Միաժամանակ, ակնհայտ է, որ հիշատակված չորս կարեւոր խնդիրներում իրական առաջընթաց գրանցվել է, թերեւս, միայն ռազմավարական սպառազինությունների կրճատման մասին նոր պայմանագրի ստորագրման հարցում: Չնայած հարկ է նշել, որ այստեղ եւս կողմերին չհաջողվեց բանակցություններն ավարտել նախապես համաձայնեցված ժամկետներում եւ նոր պայմանագիրը ստորագրել մինչեւ 2009թ. դեկտեմբերի 5-ը, այնուամենայնիվ, 2010թ. ապրիլի 8-ին Պրահայում ստորագրված համաձայնագիրը կարեւոր քայլ է միջուկային զինատեսակների կրճատման, ինչպես նաեւ երկկողմ հարաբերություններում առկա անվստահության հաղթահարման ուղղությամբ: Սակայն մյուս երեք ոլորտներում կողմերի ձեռքբերումները շատ ավելի համեստ են:

Իրանի խնդիրը

Նախագահ Օբամայի արտաքին քաղաքական կարեւոր մարտահրավերներից մեկը Իրանի հետ հարաբերությունների խնդիրն էր: Բուշ-կրտսերի վարչակազմն իրականացնում էր Իրանի մեկուսացման քաղաքականություն՝ անթաքույց հայտարարելով այդ երկրում տիրապետող կրոնապետական կարգերի տապալման մտադրության մասին: Նախագահ Օբաման Իրանի հանդեպ որդեգրեց «մտրակի եւ քաղցրաբլիթի քաղաքականությունը»՝ հայտարարելով վերջինիս հետ ուղղակի բանակցություններ սկսելու պատրաստակամության մասին: Միաժամանակ ամերիկյան կողմը շեշտում էր միջազգային հանրության ներկայացուցիչների, առաջին հերթին՝ Իրանի միջուկային խնդրով զբաղվող 5+1 ձեւաչափի անդամ այլ երկրների հետ համատեղ գործելու կարեւորությունը՝ ի հակակշիռ Բուշ-կրտսերի միակողմանի իրականացվող քաղաքականության:

Իրանի եւ 5+1 ձեւաչափը ներկայացնող պետությունների ներկայացուցիչների բանակցությունները մեկնարկեցին 2009թ. հոկտեմբերի 1-ին Ժնեւում: Իրանին ներկայացվեց ԱՄՆ, Ռուսաստանի եւ Ֆրանսիայի համատեղ առաջարկը, որը նախատեսում էր թեթեւ հարստացված իրանական ուրանի տեղափոխում Ռուսաստան՝ հետագա հարստացումն այնտեղ իրականացնելու համար: Այնուհետեւ Ֆրանսիայում այն պետք է վերափոխվեր միջուկային վառելիքի եւ ուղարկվեր Իրան: Սակայն պաշտոնական Թեհրանը մերժեց այդ առաջարկը եւ հայտարարեց

ուրանի հարստացման նոր գործարանների կառուցման եւ ուրանի հետագա հարստացումը սեփական տարածքում իրականացնելու մտադրության մասին:

Ստեղծված պայմաններում Օբամայի վարչակազմը հայտարարում է առաջիկա մի քանի ամիսների ընթացքում ՄԱԿ Անվտանգության խորհրդում Իրանի դեմ նոր պատժամիջոցներ նախատեսող բանաձեւի ընդունման անհրաժեշտության մասին: Ակնհայտ է, որ ԱՄՆ-ը այս խնդրում առաջին հերթին ունի Ռուսաստանի աջակցության կարիքը, քանի որ Անվտանգության խորհրդի մշտական անդամներից Մեծ Բրիտանիան եւ Ֆրանսիան աջակցում են ԱՄՆ դիրքորոշմանը, իսկ Ռուսաստանի համաձայնության դեպքում Չինաստանի հակազդեցությունը համեմատաբար հեշտ հաղթահարելի կլինի:

Դեռեւս 2009թ. սեպտեմբերին Նյու Յորքում խոսելով Իրանի միջուկային խնդրի մասին՝ Դմիտրի Մեդվեդեւը հայտարարել էր, որ չնայած պատժամիջոցները հազվադեպ են արդյունավետ լինում, սակայն երբեմն դրանց կիրառումն անխուսափելի է՝ առաջին անգամ ակնարկելով Ռուսաստանի հնարավոր համաձայնության մասին՝ Իրանի հանդեպ պատժամիջոցների կիրառման խնդրում: Փաստորեն, Ռուսաստանը համաձայնվում է անհրաժեշտ պահին առնվազն չխոչընդոտել Իրանի դեմ նոր պատժամիջոցների կիրառմանը: Սակայն առայժմ չկա հստակություն այն հարցում, թե արդյոք կողմերը համաձայնեցրել են տեսակետները նաեւ «անհրաժեշտ պահի» գնահատման վերաբերյալ: Շատ հավանական է, որ ԱՄՆ-ի կողմից Անվտանգության խորհրդում նոր պատժամիջոցներ նախատեսող բանաձեւի ներկայացման դեպքում Ռուսաստանը հայտարարի, որ դիվանագիտական հնարավորությունները դեռեւս չեն սպառվել եւ պահանջի Իրանին հավելյալ ժամանակ տրամադրել՝ հետաձգելով նոր պատժամիջոցների կիրառումը: Չի բացառվում նաեւ, որ Ռուսաստանն անուղղակիորեն աջակցում է Բրազիլիայի եւ Թուրքիայի՝ Իրանի միջուկային ծրագրի խնդրում այլընտրանքային լուծումներ գտնելու համատեղ ջանքերին: Փաստորեն, կարող ենք արձանագրել, որ հարաբերությունների վերագործարկումից մեկ տարի անց կողմերին չի հաջողվել լուրջ առաջընթաց արձանագրել Իրանի միջուկային ծրագրի առնչությամբ:

Հակահրթիռային պաշտպանության համակարգ

Ռուս-ամերիկյան հարաբերություններում կարեւոր տարածայնություններից մեկն Արեւելյան Եվրոպայում հակահրթիռային նոր համակարգ տեղակայելու Բուշ-կրտսերի վարչակազմի որոշումն էր, որը Ռուսաստանը

միանշանակ ընկալում էր որպես իր դեմ ուղղված քայլ: Պաշտոնական Մոսկվան բազմիցս կոչ էր արել ԱՄՆ-ին հրաժարվել այդ ծրագրի իրականացումից՝ հակառակ պարագայում սպառնալով հրթիռային նոր համակարգեր տեղակայել Կալինինգրադի մարզում:

Օբամայի վարչակազմի՝ Ռուսաստանի հետ հարաբերությունները վերագործարկելու մտադրությունը կարծես թե հիմքեր էր ստեղծում այս խնդրում առաջընթաց արձանագրելու համար: Եվ իրոք, երկկողմ բանակցությունների արդյունքում 2009թ. սեպտեմբերի 17-ին ԱՄՆ իշխանությունները պաշտոնապես հայտարարեցին հակահրթիռային պաշտպանության ծրագրից հրաժարվելու մասին: Սակայն դրա փոխարեն Օբամայի վարչակազմն առաջ քաշեց Եվրոպայում հակահրթիռային պաշտպանության նոր համակարգի ստեղծման ծրագիրը, որի հիմնական թիրախը կարճ եւ միջին հեռահարության հրթիռներն են: Մի քանի փուլերից բաղկացած այս ծրագիրը նախատեսում է ամերիկյան հակահրթիռային պաշտպանության սարքավորումների տեղադրում հարավային եւ հյուսիսային Եվրոպայի մի շարք երկրներում, ինչպես նաեւ Միջերկրական ծովում տեղակայված ամերիկյան ռազմանավերի վրա: Եթե սեպտեմբերի 17-ից անմիջապես հետո Ռուսաստանի իշխանությունները գոհունակություն էին արտահայտում ամերիկյան կողմի ընդունած որոշման առնչությամբ, ապա աստիճանաբար թե՛ պաշտոնական Մոսկվայի եւ թե՛ ռուս վերլուծաբանների ու փորձագետների դիրքորոշումներն սկսեցին փոխվել: Ռուսական կողմի համար ակնհայտ էր դառնում, որ ամերիկյան նոր համակարգը եւս ցանկացած պահի կարող է կիրառվել Ռուսաստանի դեմ, եւ եթե նախկինում հակահրիթռային պաշտպանության համակարգի տարրերը տեղակայվելու էին միայն Չեխիայում եւ Լեհաստանում, ապա ամերիկյան նոր մոտեցումը կարող է հանգեցնել այդ աշխարհագրության ընդլայնմանը:

Ֆորմալ առումով հրաժարվելով նախագահ Բուշ-կրտսերի ծրագրից եւ հրապարակայնորեն ցուցադրելով Ռուսաստանի հետ հարաբերություններում փոխզիջումների գնալու իր պատրաստակամությունը՝ Օբամայի վարչակազմը շարունակում է հակահրթիռային պաշտպանության նոր համակարգի ձեւավորման գործընթացը, որը տեսականորեն կարող է խախտել ԱՄՆ-ի եւ Ռուսաստանի միջեւ ձեւավորված ուժերի հավասարակշռությունը: Պատահական չէ այն հանգամանքը, որ Ռուսաստանում աստիճանաբար ավելանում է այս ծրագրի հանդեպ առկա դժգոհությունը, որը կարող է որոշակի հավելյալ լարվածություն հաղորդել երկկողմ հարաբերություններին:

Մրցակցությունը հետխորհրդային տարածաշրջանում

Հետխորհրդային տարածքում ռուս-ամերիկյան մրցակցության խնդիրը երկկողմ հարաբերությունների «վերագործարկման» կարեւոր բաղադրիչներից է: Պաշտոնական Մոսկվան որպես հարաբերությունների բարելավման շոշափելի արդյունք ակնկալում էր այս հարցում ԱՄՆ քաղաքականության փոփոխություն: Սակայն Օբամայի վարչակազմը հստակ հայտարարեց, որ արտոնյալ շահերի եւ ազդեցության գոտիների վրա հիմնված արտաքին քաղաքական հայեցակարգն անընդունելի է ԱՄՆ-ի համար՝ փաստացի մերժելով հետխորհրդային հանրապետությունները Ռուսաստանի ազդեցության ոլորտ ճանաչելու պաշտոնական Մոսկվայի առաջարկը:

Միաժամանակ հարկ է նշել, որ Իրաքում եւ Աֆղանստանում ստեղծված իրավիճակը, ինչպես նաեւ ԱՄՆ ներքին խնդիրները՝ ֆինանսական ճգնաժամ, առողջապահության համակարգի բարեփոխումներ եւ այլն, որոշակիորեն նվազեցրել են ԱՄՆ իշխանությունների ներգրավվածությունը հետխորհրդային տարածաշրջանում: Պատահական չէ, որ 2010թ. Ուկրաինայում կայացած նախագահական ընտրություններում ԱՄՆ-ը չուներ այն ուղղակի ներգրավվածությունը, ինչն ակնհայտ էր 2004թ.: ԱՄՆ-ը եւ, ընդհանրապես, Արեւմուտքը բավական հանգիստ ընդունեց Վիկտոր Յանուկովիչի հաղթանակը եւ Ռուսաստանի հետ հարաբերությունները բարելավելու վերջինիս ձեռնարկած քայլերը, այդ թվում ռուսական Սեւծովյան նավատորմի՝ Ղրիմում տեղակայման ժամկետը 25 տարով երկարացնելու մասին ռուս-ուկրաինական համաձայնագրի ստորագրումը:

Այնուամենայնիվ, ամերիկյան նոր վարչակազմը չի հրաժարվել հետխորհրդային հանրապետություններում սեփական դիրքերի ամրապնդման եւ Ռուսաստանի ազդեցության թուլացման նպատակից եւ միանշանակ մերժել է այս տարածաշրջանը Ռուսաստանի արտոնյալ շահերի գոտի ճանաչելու հնարավորությունը: Հետխորհրդային տարածաշրջանում ռուս-ամերիկյան հակասությունները, թեեւ ավելի քողարկված ձեւով, պահպանվում են, եւ որոշակի պահի կարող են երկկողմ հարաբերություններում լուրջ ճգնաժամի պատճառ հանդիսանալ:

ԹՈՒՐՔԻԱՆ ԵՎ ԻՐԱՆԻ ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ԾՐԱԳԻՐԸ

Հայկ Գաբրիելյան

Թուրքիայի ներկայիս վարչակարգի՝ իսլամական աշխարհի հետ մերձեցման քաղաքական գիծը հանգեցրեց թուրք-իսրայելական հարաբերությունների կտրուկ սրմանը, որն էլ իր հերթին բերեց թուրք-իրանական հարաբերությունների աշխուժացմանը:

Ներկայումս Անկարայի ու Թեհրանի հարաբերությունները գտնվում են բավական բարձր մակարդակի վրա: Միջին Արեւելքի խոշորագույն այս երկրները դեմ են հանդես գալիս ամերիկյան «Մեծ Մերձավոր Արեւելք» նախագծին, քանի որ դրանով նախատեսվում է մասնատել այդ երկրները: Ժամանակին Իրանը ողջունեց թուրքական խորհրդարանի որոշումը՝ մերժել տարածքի տրամադրումը ԱՄՆ-ին Իրաքի դեմ ռազմական գործողության համար: Իրանական կողմը քրդական հարցում համակարծիք է Թուրքիայի հետ եւ աջակցում է Քրդական բանվորական կուսակցության (ՔԲԿ) անջատողականների դեմ վերջինիս պայքարին, ինչն ընդգծվեց 2006 թվականին ձերբակալված քուրդ զինյալներին Թուրքիային հանձնելով եւ սեփական տարածքում ՔԲԿ ակտիվիստների բազավորմանն արգելք հանդիսանալով:

Երկու երկրների հարաբերությունների զարգացման գործում կարեւոր դեր է խաղում էներգետիկ գործոնը: 2009 թվականի հունվարին էրդողանը Բրյուսելում հայտարարեց, որ առանց Իրանի մասնակցության անիմաստ է խոսել «Նաբուկո» գազատարի նախագծի մասին: Էրդողանի այդ հայտարարությունը պայմանավորված էր նրանով, որ տարածաշրջանի խոշորագույն էներգետիկ-տրանսպորտային հանգույց դառնալու ցանկություն ունեցող Թուրքիայի համար Իրանը մեծ նշանակություն ունի, քանի որ տիրապետում է ածխաջրածինների մեծ պաշարների եւ առաջիկայում կարող է դառնալ ԵՄ կարեւոր գազամատակարար երկիր: Բացի այդ, Թուրքիան գտնում է, որ Կենտրոնական Ասիայի մուտքն Իրանով առավել անվտանգ է, քան Վրաստանով:

Թուրքիան այսօր շահագրգռված է Իրանում եւ նրա շուրջ կայունության պահպանմամբ: Անկարան իր միջնորդական ծառայությունն է առաջարկել Արեւմուտքին ու Իրանին, որոնց միջեւ վեճի առարկա է հանդիսանում վերջինիս միջուկային ծրագիրը: Իրանն էլ հույս ունի ստանալ Թուրքիայի աջակցությունն այն փակուղային իրավիճակում, որն

առաջացել է իր միջուկային ծրագրի հետ կապված: Անկարան առավել հակված է այն տարբերակին, ըստ որի՝ յուրաքանչյուր պետություն իրավունք ունի խաղաղ նպատակներով մշակելու միջուկային տեխնոլոգիաներ: 2009 թվականի հոկտեմբերի վերջին Իրան կատարած այցելության ժամանակ այս մասին բարձրաձայնեց Թուրքիայի վարչապետ Էրդողանը: Նա Իրանն անվանեց «Թուրքիայի ընկեր» եւ հատուկ ընդգծեց Արեւմուտքի ոչ օբյեկտիվ վերաբերմունքն Իրանի միջուկային ծրագրի նկատմամբ. «Յուրաքանչյուր պետություն իրավունք ունի խաղաղ նպատակներով օգտագործել ատոմային էներգիան, եւ նրանք, ովքեր կողմ են գլոբալ միջուկային զինաթափմանը, պետք է առաջին հերթին այդ գործընթացն սկսեն հենց իրենցից»: Էրդողանն Իրանի նկատմամբ հնարավոր ռազմական ինտերվենցիան որակեց որպես «անհեթեթություն»: Սա իսկապես աննախադեպ քննադատություն էր՝ ուղղված Արեւմուտքի հասցեին: Իր հերթին Իրանի նախագահ Մահմուդ Ահմադինեժադն անցյալ տարվա Դավոսյան միջադեպից հետո Էրդողանին համարում է իր անձնական ընկերը:

Չնայած դրան՝ Թուրքիան դեմ է, որ Իրանն ունենա միջուկային ռումբ, քանի որ Իրանի կողմից միջուկային զենքի ստեղծումն իր հերթին կնպաստի «շղթայական ռեակցիայի» էֆեկտի զարգացմանը, երբ Իրանից հետո միջուկային զենքի մշակմամբ կսկսեն զբաղվել տարածաշրջանի այլ երկրներ եւս:

2010 թվականի ապրիլի 13-ին Վաշինգտոնում 47 երկրների մասնակցությամբ բացվեց միջուկային անվտանգության գագաթաժողովը, որի մասնակիցները պայմանավորվեցին հետագա 4 տարիների ընթացքում միջուկային տեխնոլոգիաների ու դրանց արտահանման վերահսկողության մեծացման շուրջ: Այս գագաթաժողովին մասնակցելու հրավեր չէին ստացել Իրանը, Հյուսիսային Կորեան եւ Սիրիան: Եվ դա՝ այն դեպքում, երբ գագաթաժողովին մասնակցել են նաեւ այն երկրները (Հնդկաստան, Պակիստան, Իսրայել), որոնք չեն միացել Միջուկային զենքի չտարածման պայմանագրին:

Գագաթաժողովում Թուրքիայի արտգործնախարար Դավութօղլուն հայտարարեց, որ Թուրքիան դեմ է Իրանի հանդեպ պատժամիջոցների կիրառմանը: Նշելով, որ ՄԱԿ Անվտանգության խորհրդի 5 մշտական անդամները չեն բացում պատժամիջոցների մանրամասները, Դավութօղլուն հայտարարեց. «Եթե մենք պատկերացում չունենք պատժամիջոցների բովանդակության մասին, ինչպես կարող ենք լուծել այդ հարցը»:

Միեւնույն ժամանակ, ԱՄՆ նախագահ Օբամայի եւ Թուրքիայի վարչապետ Էրդողանի միջեւ տեղի ունեցած 45 րոպեանոց հանդիպման

ժամանակ, այլ հարցերի հետ մեկտեղ, քննարկվել է նաեւ Իրանի միջուկային ծրագիրը: Էրդողանը նշել է, որ այդ հարցը պետք է լուծվի դիվանագիտական ճանապարհով: Օբաման իր հերթին գնահատել է Թուրքիայի ջանքերն այդ ուղղությամբ եւ կարեւորել նրա դերը տվյալ հարցում:

Միաժամանակ, Ջորջ Մեյսոնի համալսարանում (GMU) Ալի Վուրալի անվան Գլոբալ իսլամական հետազոտությունների կենտրոնի բացման արարողության ժամանակ Էրդողանը հայտարարեց. «Թուրքիան դեմ է միջուկային զենքի տարածմանը, եւ մենք ցանկանում ենք, որ այն երկրները, որոնք տիրապետում են միջուկային զենքին, որոշակի ժամկետներում ձերբազատվեն դրանից»: Էրդողանի այս հայտարարությունը նման է Իրանում հնչեցրած 2009 թվականի հոկտեմբերյան հայտարարությանը:

Ի հակակշիռ Վաշինգտոնում կայացած միջուկային անվտանգության գագաթաժողովի՝ ապրիլի 17-18-ին Թեհրանում տեղի ունեցավ ատոմային ապառազմականացման գագաթաժողով, որի պաշտոնական կարգախոսն էր. «Ատոմային էներգիան՝ բոլորին, ատոմային զենքը՝ ոչ մեկին»: Գագաթաժողովին մասնակցել են 56 երկրների պաշտոնական եւ ոչ պաշտոնական պատվիրակություններ:

Թուրքիայի արտգործնախարար Դավութօղլուն չմասնակցեց իրանական միջուկային գագաթաժողովին, քանի որ տվյալ ժամանակ պլանավորել էր այցելել Բաքու: 2010-ի ապրիլի 20-ին Դավութօղլուն Բաքվից ժամանեց Թեհրան, ուր հանդիպումներ ունեցավ երկրի նախագահ Մահմուդ Ահմադինեժադի, իր իրանական գործընկեր Մանուչեհր Մոթաքիի, խորհրդարանի խոսնակ Ալի Արդաշիր Լարիջանիի եւ Իրանի Ազգային անվտանգության խորհրդի քարտուղար Սայիդ Ջալիլիի հետ:

Թեհրանում իրանական ղեկավարության ներկայացուցիչների հետ հանդիպման նախօրեին Դավութօղլուն հայտարարեց, որ ուրանի փոխանակման համաձայնագրի շուտափույթ ստորագրումը դրականորեն կանդրադառնա ներկայումս միջազգային ասպարեզում առաջացած մթնոլորտի վրա. «Տվյալ հարցում Անկարան պատրաստ է անել ամեն ինչ՝ իր ուժերի սահմանում: Իրանի հանդեպ նոր պատժամիջոցների կիրառման դեպքում Թուրքիան, տարածաշրջանի մյուս երկրների համեմատ, ամենից շատ իր վրա կզգա դեպքերի նմանատիպ զարգացումը: Դրա համար էլ Թուրքիան ջանքեր է գործադրում գտնելու այնպիսի լուծում, որ ՄԱԿ ԱԽ-ը չդիտարկի պատժամիջոցների կիրառման հարցը»:

Թեհրանում Դավութօղլուն հայտարարեց, որ Թուրքիան կարող է նպաստել Իրանի ու Արեւմուտքի միջեւ ատոմային վեճի դիվանագի-

տական լուծմանը, որով նախատեսվում է, որ Իրանն իր ուրանի մի մասը հարստացման նպատակով կուղարկի արտերկիր. «Եթե Իրանը հանդես գա ռեակտորին անհրաժեշտ վառելիքի փոխանակման գործընթացում Թուրքիային միանալու նախաձեռնությամբ, ապա մենք պատրաստ ենք սկսել նման համագործակցություն»: Սակայն Իրանը չարձագանքեց Անկարայի առաջարկին, ինչի պատճառն այն է, որ Թեհրանը պնդում է, որ այդ փոխանակումը տեղի ունենա միաժամանակ եւ իր տարածքում:

Հարկ է նշել, որ Դավութօղլուի այս հայտարարությունը նորույթ չէ. 2009 թվականի նոյեմբերին Թուրքիան պատրաստակամություն հայտնեց իր տարածքում պահելու իրանական քիչ հարստացված ուրանը, որպեսզի հետագայում այն փոխանակի մինչեւ 20 տոկոս հարստացված միջուկային վառելիքի հետ: Քանի որ Թուրքիան չուներ հարստացված ուրան, ուստիեւ այն պետք է Թուրքիա հասցվեր Ֆրանսիայից կամ Ռուսաստանից: Միջուկային հումքի հարստացման հզորություն չունենալու պատճառով՝ Թուրքիան առաջարկում էր իր տարածքն օգտագործել որպես ելակետ՝ դա Ռուսաստան կամ Ֆրանսիա հասցնելու եւ այնտեղ վերամշակելու համար: Դրանով Թուրքիան ձգտում է վերածվել էներգետիկ միջուկային կենտրոնի: Սակայն Իրանն այն ժամանակ նույն պատճառով չարձագանքեց դրան:

Այս կապակցությամբ ԱՄՆ Պետդեպարտամենտի պաշտոնական ներկայացուցիչ Ֆիլիպ Քրոուլին հայտարարեց, որ Թուրքիան կարող է կարեւոր դեր խաղալ միջուկային վառելիքի փոխանակման շուրջ Իրանի հետ բանակցային գործընթացում, եւ որ ԱՄՆ-ը դրականորեն է նայում դրան. «Իհարկե մենք այստեղ տեսնում ենք Թուրքիայի դերը: Թուրքիան սահմանակից է Իրանին: Իրանում տեղի ունեցող իրադարձություններն առաջին հերթին ազդում են Թուրքիայի վրա»: Միեւնույն ժամանակ, Քրոուլիի խոսքերով՝ Թուրքիան կարող է միջուկային գործողությունների դադարեցման հարցում համոզել Իրանին. «Եթե կան երկրներ, որոնք լավ հարաբերություններ ունեն Իրանի հետ, եւ եթե այդ երկրները կարող են համոզել Իրանին՝ փոխել ուղղությունը, ապա մենք ուրախությամբ կընդունենք դա: Թուրքիայի ջանքերն այդ ուղղությամբ կարող են դրական լինել»:

Ի դեպ, այս տարվա մարտի վերջերին Թուրքիայի նախագահ Գյուլը հայտարարեց, թե կասկած չկա, որ Իրանը ցանկանում է ստեղծել միջուկային ռումբ: Հնարավոր է՝ նաեւ այս պատճառով է, որ ներկայումս Իրանի համար առավել ցանկալի է Բրազիլիայի միջնորդությունը, որն Իրանի միջուկային ծրագրի հարցում ունի նույնպիսի դիրքորոշում, ինչ Թուրքիան: Սակայն Իրանի տվյալ մոտեցման մեջ ծանրակշիռ դեր են

խաղում Թուրքիայի հետ վաղեմի մրցակցությունն ու տարածաշրջանում վերջինիս դերը չմեծացնելու ձգտումը:

Ապրիլի 22-ին Դավութօղլուն Բրյուսելում հայտարարեց, որ Իրանի հետ ռազմական հակամարտության պարագայում կտուժի ոչ միայն նա, այլեւ տարածաշրջանի մնացած երկրները. «Մեր ջանքերն ուղղված են ոչ թե մեկ երկրի պաշտպանությանը մեկ այլ երկրից, այլ տարածաշրջանի եւ գլոբալ մասշտաբով աշխարհի խաղաղության պաշտպանությանը»: Հակառակ դեպքում, Դավութօղլուի խոսքերով, կառաջանա այնպիսի սցենար, որը կորուստներ կպատճառի բոլոր կողմերին, եւ կսկսվի այնպիսի ժամանակաշրջան, երբ կառաջանա ոչ անհրաժեշտ լարվածություն:

Ինչ վերաբերում է տվյալ հարցում թուրք հասարակության դիրքորոշմանը, ապա դրա մասին պատկերացում են տալիս 2010 թվականի հունվարի սկզբներին «Metro Poll» ռազմավարական ու սոցիալական հետազոտությունների կենտրոնի անցկացրած հարցախույզի արդյունքները: Հարցման մասնակիցները պետք է պատասխանեին այն հարցին, թե արդյոք Թուրքիան պետք է աջակցի Իրանի դեմ հնարավոր տնտեսական պատժամիջոցներին/ուժային գործողություններին՝ կապված նրա միջուկային ծրագրի հետ, թե ընդդիմանա դրան: Հարցվածների 60.2 տոկոսը նշել է, որ Թուրքիան պետք է հանդես գա Իրանի հանդեպ պատժամիջոցներ կիրառելու դեմ: Հարցվածների 26 տոկոսն էլ գտնում է, որ Թուրքիան պետք է աջակցի պատժամիջոցներ կիրառելուն կամ ռազմական միջամտությանը: 13.8 տոկոսն էլ նշել է, որ դժվարանում է պատասխանել: Այս ամենի հետ մեկտեղ, հարցվածների մեծամասնությունը՝ 57.6 տոկոսը, կարծում է, որ Իրանի միջուկային զենք ունենալու հանգամանքը Թուրքիայի համար կարող է սպառնալիք հանդիսանալ, 34.7 տոկոսի կարծիքով՝ տվյալ դեպքում ոչ մի սպառնալիքի մասին խոսք լինել չի կարող: 8.6 տոկոսը դժվարացել է կողմնորոշվել այդ հարցում: Հարցախույզի մասնակիցների 48.8 տոկոսը հավանության էր արժանացրել Իրանի վերաբերյալ Էրդողանի հակաարեւմտյան հայտարարությունները, իսկ 42.6 տոկոսը դեմ էր արտահայտվել դրան:

Թուրք փորձագետ, «Türksam» միջազգային հարաբերությունների ու ռազմավարական վերլուծությունների կենտրոնի փոխնախագահ Ջելալեթթին Յավուզն իր «Հարեւան Իրանը բարեկա՞մ է, թե՞ վտանգ է ներկայացնում» հոդվածում նախ մանրամասնում է, թե ինչու են ոչ միջուկային երկրները ձգտում հայտնվել միջուկային երկրների շարքում: Ըստ Յավուզի՝ դրա պատճառները երկուսն են՝ ա) թշնամուն վախ ներշնչելը, բ) այլ երկրների կողմից հարգանք վայելելը:

Հենց այս նկատառումներից ելնելով՝ Յավուզը կարծում է, որ եթե Իրանը տիրապետի միջուկային զենքին, ապա դա ամենեւին էլ չի նշանակում, որ նա դա անպայմանորեն պետք է ուղղի մեկ այլ պետության դեմ: Ավելին, եթե նույնիսկ Իրանը գնա այդ քայլին, ապա Թուրքիան ընդգրկված չի լինի իրանական առաջին միջուկային հարվածին ենթարկվող երկրների գոտում: Այստեղ հասկանալի է, որ Յավուզն ամենից առաջ նկատի ունի Իսրայելը: Յավուզը դա պատճառաբանում է հետեւյալ հանգամանքներով.

1. Իրանի բնակչության նվազագույնը կեսն ունի թյուրքական ծագում, ինչը հանդիսանում է Իրանի կողմից Թուրքիային միջուկային հարված հասցնելու կանխիչ գործոն: Այստեղ Յավուզը որոշակիորեն ուռճացնում է Իրանի թյուրքախոս բնակչության թվաքանակը, քանի որ այն կազմում է 30-40 տոկոս: Յավուզը նկատի ունի ադրբեջանցիներին (12-21 միլիոն մարդ), նրանցից հետո Իրանում բնակվող մեծությամբ երկրորդ մեծ թյուրքական խմբին՝ քաշքայներին (1.5-2 միլիոն մարդ) ու թուրքմեններին:

2. Թուրքիան ՆԱՏՕ անդամ է եւ գտնվում է ՆԱՏՕ «միջուկային անձրեւանոցի» հովանու ներքո: Այսինքն՝ դեպի Թուրքիա միջուկային հրթիռ արձակելը հակառակ ազդեցությունը կունենա նման կերպ վարվող երկրի համար եւ աննախադեպ վնասներ կպատճառի նրան: Հարկ է նշել, որ ՆԱՏՕ կանոնադրության 5-րդ հոդվածի համաձայն, եթե նրա անդամներից մեկը ենթարկվում է զինված հարձակման, ապա ՆԱՏՕ մյուս անդամները պետք է օգնություն ցուցաբերեն (այդ թվում նաեւ զինված ուժերի ներգրավմամբ) հարձակման ենթարկված այդ երկրին:

3. Թուրքիայի տարածքում անգամ միջուկային մեկ ռումբի պայթյունն էական ազդեցություն կթողնի մթնոլորտի վրա, ինչն անխուսափելիորեն կազդի նաեւ հարեւան Իրանի (եւ ոչ միայն) վրա: Այս առումով կարելի է նշել, որ քամին կարող է ռադիոակտիվ ամպերը թուրքական տարածքից քշել դեպի իրանական տարածք, ինչպես որ տեղի ունեցավ Չեռնոբիլի աղետից հետո Թուրքիայի սեւծովյան հատվածում, ուր մինչեւ հիմա բնակչության գրեթե կեսը տառապում է ուռուցքային հիվանդություններով:

4. Իրանի այդ քայլը կհանգեցնի մահմեդական աշխարհում նրա մեկուսացմանը: Բնականաբար, դա կառաջացնի տվյալ հարցում մահմեդական հանրության անընդունելիությունը եւ զայրույթը:

Այսպիսով, վերլուծության ենթարկելով Իրանի միջուկային ծրագրի հարցում Թուրքիայի ներկայիս դիրքորոշումը՝ այն կարելի է բաժանել երկու մասի.

ա) *Քաղաքական* – Պետք է կարծել, որ քաղաքական նկատառումներից ելնելով՝ Թուրքիայի համար անցանկալի է «միջուկային» Իրանը,

ինչի համար էլ նպատակահարմար կհամարվի Արեւմուտքի կողմից իր վաղեմի մրցակից Իրանին ռազմական հարված հասցնելը: Դրա արդյունքում Թուրքիայի խոշորագույն եւ առավել ուժեղ հարեւան Իրանը տարածաշրջանում կկորցնի իր ազդեցիկ դերը, կվերածվի երկրորդական երկրի եւ տեւական ժամանակ չի կարողանա տարածաշրջանում առաջատար դիրքեր զբաղեցնելու շուրջ մրցակցել Թուրքիայի հետ: Իսկ այդ մրցակցությունն ունի կեսհազարամյա պատմություն:

բ) *Տնտեսական* – Թուրքիայի ներկայիս դիրքորոշման մեջ ամենաածանրակշիռ դերը խաղում է տնտեսական գործոնը: Թուրքիան գտնում է, որ Իրանին ռազմական հարված հասցնելու արդյունքում, տարածաշրջանի մնացած երկրների համեմատ, ամենաշատը կտուժի ինքը: Թուրքիայի այդ դիրքորոշման պատճառը բխում է ոչ վաղ անցյալի նրա պատմական փորձից. 1991 թվականին տեղի ունեցած Պարսից ծոցի առաջին պատերազմում Թուրքիայի կրած վնասները կազմեցին 50 միլիարդ ամերիկյան դոլար, իսկ 2003 թվականի Պարսից ծոցի երկրորդ պատերազմում՝ 80 միլիարդ: ԱՄՆ-ը փոխհատուցեց այդ վնասների միայն մի մասը:

Ներկայումս Իրանը էներգետիկ ոլորտում Թուրքիայի երկրորդ խոշոր գործընկերն է (Ռուսաստանից հետո): Թուրքիան այժմ մտադիր է 3.5-4 միլիարդ դոլարի ներդրում անել Պարսից ծոցի ափին գտնվող «Հարավային Փարսում», ուր առկա են հարուստ գազահանքեր: Այսօր երկու երկրների միջեւ ապրանքաշրջանառությունը հասել է 11 միլիարդ դոլարի: Պլանավորված է այդ թվաքանակը հասցնել 20-30 միլիարդի, ինչպես նաեւ միմյանց միջեւ առեւտուրն իրականացնել ազգային արժույթներով: Բացի այդ, նախատեսվում է թուրք-իրանական սահմանին ստեղծել ազատ առեւտրային գոտի: Եվ վերջապես, Թուրքիա տարեկան այցելում է մոտ 2 միլիոն իրանցի զբոսաշրջիկ:

Սակայն տնտեսական գործոնում վճռորոշ դերը պատկանում է նավթի ու բնական գազի համաշխարհային գների աճին, ինչից ամենաշատն է վախենում Թուրքիան: Կանխատեսվում է, որ Իրանին ռազմական հարված հասցնելու պարագայում նավթի ու գազի գները կարճ ժամանակահատվածում եռակի աճ կարձանագրեն, իսկ Հորմուզի նեղուցի փակվելու դեպքում ԱՄՆ-ը, Արեւմտյան Եվրոպան ու Չինաստանը կզրկվեն այդ նեղուցով արտահանվող մերձավորարեւելյան նավթի 40 տոկոսից:

Այս ամենից հետեւում է, որ Իրանի միջուկային ծրագրի հարցում չեն համընկնում Թուրքիայի քաղաքական ու տնտեսական շահերը, եւ տնտեսությունը հանդես է գալիս քաղաքականության դեմ:

ՉԻՆԱՍՏԱՆԸ ԵՎ ԹՈՒՐՔԻԱՆ. ԵՎՐԱՍԻԱՅՈՒՄ ԴԻՐՔԵՐԻ ՃՇԳՐՏՄԱՆ ԸՆԹԱՑՔ

Սուրեն Սարյան

Չինաստանը եւ Թուրքիան վերջին երկու տարիների ընթացքում դարձան այն պետությունները, որոնց դերակատարումն ու կշիռը ինչպես տարածաշրջանային, այնպես էլ համաշխարհային քաղաքականության եւ տնտեսության մեջ էական փոփոխությունների ենթարկվեցին: Ընդ որում, այս պետություններն առաջնային կարեւորություն ունեն Եվրասիայի աշխարհաքաղաքական եւ աշխարհատնտեսական զարգացումներում: Այս առումով հետաքրքրական է տեսնել, թե ինչպես են Պեկինն ու Անկարան հարաբերվում իրար հետ:

Նախ, վերջին զարգացումները ցույց տվեցին, որ Չինաստանն ու Թուրքիան ակտիվացնում են քաղաքական շփումները, ինչի վկայությունը դարձան միայն մեկ տարվա ընթացքում Թուրքիայի նախագահ Ա.Գյուլի պետական այցը ՉԺՀ, ապա Թուրքիայի պետնախարար Ձ.Չաղլայանի երկու այցերը Չինաստան, որոնց հաջորդեցին ՉԺՀ առեւտրի նախարար Չեն Դեմինի, ԱԳ նախարար Յան Չիեչիի եւ ՉԺՀ Կոմկուսի Քաղբյուրոյի անդամ Լի Չանչունի այցերը Թուրքիա: Այդ այցերի ընթացքում չինացի պաշտոնյաներն անընդհատ շեշտում են, որ Չինաստանն ու Թուրքիան բախվում են համանման խնդիրների, ինչպիսիք են սոցիալ-տնտեսական զարգացման ապահովումը, ազգային միասնականության եւ տարածքային ամբողջականության պաշտպանությունը: Հետեւաբար, երկու երկրները պետք է աջակցեն իրար միջազգային ասպարեզում:

Այս առումով Անկարայի եւ Պեկինի հարաբերություններում խիստ կարեւոր տեղ է զբաղեցնում ույղուրական հիմնախնդիրը: Բարձր մակարդակի հանդիպումների ժամանակ ՉԺՀ-ն բազմիցս շեշտել է, որ Թուրքիայի հետ իր հարաբերությունները պայմանավորում է ույղուրական ահաբեկչության եւ անջատողական շարժման հանդեպ Անկարայի դիրքորոշմամբ: Այսպես, դեռ 2000թ. երկու երկրների միջեւ ստորագրվեց անվտանգության ոլորտում համագործակցության մասին համաձայնագիր, համաձայն որի՝ Չինաստանն ու Թուրքիան պարտավորվեցին համագործակցություն ծավալել անջատողական շարժումների դեմ համատեղ պայքարում: Դրա արդյունքում չինական իշխանություններին հաջողվեց հասնել Թուրքիայում գործող ույղուրական շարժման կենտրոնի գործունեության չեզոքացմանը, որի արդյունքում այն տեղափոխվեց ԱՄՆ:

Սակայն վերջին ժամանակաշրջանում չին-թուրքական հարաբերություններում արձանագրվեց լուրջ ճգնաժամ, որն առաջացավ 2009թ. ամռանը ՉԺՀ Սինձյան-ույղուրական ինքնավար շրջանում տեղի ունեցած դեպքերից հետո: Ընդ որում, հետաքրքրական է, որ ժամանակային առումով Սինձյանի իրադարձությունները հաջորդեցին հունիսին Թուրքիայի նախագահ Ա.Գյուլի Չինաստան կատարած պետական այցին, որի ընթացքում երկու երկրների ղեկավարությունների կողմից առանձնահատուկ շեշտվեց տնտեսական համագործակցության հետագա զարգացման առաջնայնությունը՝ հետին պլան մղելով Թուրքիայի եւ Չինաստանի քաղաքական երկխոսության շրջանակներում նախկին տարիներին առկա խնդիրները, մասնավորապես՝ ույղուրական խնդիրը: Ընդ որում, թուրքական պետության ղեկավարը չինական կողմի առաջարկով առաջին անգամ այցելեց Սինձյան:

Հետաքրքրական է նաեւ, որ եթե Սինձյանում տեղի ունեցած իրադարձություններին հաջորդած օրերին Չինաստանի կենտրոնական մամուլը եւ ԱԳՆ-ն միտված էին Սինձյանի իրադարձությունների հրահրման մեջ մեղադրելու «ԱՄՆ որոշ շրջանակների», ապա իրադարձությունների հետագա ընթացքն առաջին պլան մղեց չին-թուրքական հարաբերություններում առաջացած լարվածությունը:

Այս իրադարձություններից անմիջապես հետո Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Էրդողանը հայտարարեց, որ «Սինձյանում տեղի ունեցած իրադարձությունները կարծես ցեղասպանություն լինեն»: Էրդողանի խոսքին հետեւեց Թուրքիայի առեւտրի նախարարի հայտարարությունը երկրում չինական ապրանքները բոյկոտելու մասին՝ ի նշան ույղուրների դեմ ՉԺՀ-ի կողմից վարվող հետապնդումների քաղաքականության:

Այս կտրուկ հայտարարություններն առաջ բերեցին չինական լրատվամիջոցների անդրադարձը Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանությունը ժխտելու փաստին: Մասնավորապես՝ Չինաստանի Կոմկուսի պաշտոնական «People's Daily» օրաթերթի ինտերնետային հրապարակման մեջ նշվում է, որ Թուրքիան, որին Արեւմուտքը մեղադրում է հայերի ցեղասպանության եւ քրդերի դեմ պատժիչ գործողություններ իրականացնելու համար, տուրք տալով իր պանթյուրքիստական երազանքներին, անհիմն մեղադրանքներ է ներկայացնում Չինաստանին, որը երբեւէ չի վիրավորել Թուրքիային: Մեկնաբանելով թուրքական կողմի արձագանքները Սինձյանի իրադարձությունների առնչությամբ՝ չինացի փորձագետները կարծիք հայտնեցին, որ Թուրքիայի վարչապետը, արձագանքելով թուրքական հասարակության մեջ առկա ազգայնական եւ պանթյուրքիստական տրամադրություններին, տուրք է տվել պոպուլիզմին եւ դրա հետեւանքով կարող է լրջորեն վնասել չին-թուրքական հարաբերությունները:

Իրենց թուրք գործընկերների հետ հետագա շփումներում չին դիվանագետները հասկացրին, որ հանդես գալով այլ երկրներում թյուրքալեզու բնակչության շահերի պաշտպանի դերում՝ Թուրքիան ինքը պետք է զգուշավոր լինի տարածքային ամբողջականության եւ ազգային անվտանգության ապահովման հարցերում: Եվ Անկարայում միանգամից ընկալեցին Քուրդիստանի խաղաքարտը շահարկելու հարցում ԱՄՆ-ին Չինաստանի միանալու հետեւանքները:

Անմիջապես հետո թուրքական կառավարությունը զերծ մնաց ույղուրական շարժման առաջնորդ Ռեբիյա Քադիրի Թուրքիա նախատեսված այցն իրականացնելու քայլից, իսկ թուրքական մամուլը մոռացության մատնեց Ուրումչիի դեպքերը:

Միաժամանակ, սակայն, Սինձյանի դեպքերի առնչությամբ թուրքական կառավարության արձագանքը վկայեց, որ Անկարան փորձ է անում գրավել որոշակի դիրքեր ինչպես Եվրասիայում, այնպես էլ ԱՄՆ-ի հետ հարաբերություններում: Այդ արձագանքը կարելի է ընկալել որպես մահմեդական աշխարհում առաջնորդության համար Թուրքիայի ներկայացրած հայտ, որը դարձավ Իսրայելի դեմ եւ Պաղեստինի օգտին թուրքական դեմարշների քաղաքականության շարունակությունը: Այդ քայլով Անկարան նաեւ հավակնեց հանդես գալ որպես Եվրասիայում Չինաստանի քաղաքական ու տնտեսական զսպման հարցում զգալի դերակատարում ունեցող երկիր: Միեւնույն ժամանակ, թուրքական կառավարությունը խաղարկեց ույղուրական խաղաքարտը՝ Պեկինի հետ հարաբերություններում ավելի մեծ կշիռ եւ առավելություններ ձեռք բերելու նպատակով: Իրադարձությունների հետագա ընթացքը հաստատելու եկավ վերջին դիտարկումը, երբ Թուրքիա կատարած չին բարձրաստիճան պաշտոնյաների իրար հաջորդած այցերի ժամանակ ձեռք բերվեցին նոր համաձայնություններ՝ առեւտրատնտեսական եւ ֆինանսական ոլորտներում երկկողմ համագործակցության վերաբերյալ:

Դա նաեւ վկայում է, որ Պեկինում հաշվի են առնում Թուրքիայի դիրքը՝ որպես տարանցիկ տերության: Ինչպես նշում են չին փորձագետները, Թուրքիան, ի տարբերություն Իրանի, մեկուսացված չէ եւ, ի տարբերություն Սաուդյան Արաբիայի, ո՛չ թեոկրատական իսլամական պետություն է, ո՛չ էլ ԱՄՆ կցորդ, այլ, ընդհակառակը՝ դեպի Եվրոպա կողմնորոշվող եւ «լուսավորյալ իսլամիստական վարչակարգ» ունեցող երկիր:

Չպետք է նաեւ մոռանալ, որ Թուրքիան եւ Չինաստանն ունեն հակասություններ առեւտրատնտեսական ոլորտում՝ կապված համաշխարհային շուկայում իրենց արտադրանքի արտահանման խնդիրների հետ: Դրան գումարվում է մրցակցությունը Կասպյան ավազանի վառելիքային պաշարների ձեռքբերման համար տարվող մեծ խաղում: Վերջին տարի-

ներին Չինաստանին հաջողվեց դուրս մղել Թուրքիային Ղազախստանում եւ Թուրքմենստանում իրականացվող նավթամուղերի եւ գազատարների շինարարության նախագծերից՝ ուղղելով Կենտրոնական Ասիայի երկրների բնական պաշարների հոսքը դեպի արեւելք: Ըստ էության, Կենտրոնական Ասիայում ՉԺՀ դիրքերի ամրապնդումը չեզոքացրեց տարածաշրջանում թուրքական ազդեցության աճը:

Հարկ է նշել, որ Թուրքիայի վերնախավում վերջին տարիներին որոշակի տարածում գտավ եվրասիականության գաղափարախոսությունը, որին հարում են քաղաքական գործիչներ եւ բարձրաստիճան զինվորականներ: Հանդես գալով Թուրքիայի կայսերական անցյալի վերականգնման եւ թյուրքական աշխարհի հետ կապերի սերտացման օգտին, այդ ուղղությունը դիտում է Չինաստանին որպես հնարավոր ռազմավարական այլընտրանք՝ Միացյալ Նահանգների եւ Եվրամիության ճնշումներին դիմակայելու առումով: Սակայն Էրդողանի իսլամիստական կառավարությունը որոշակի զտումներ իրականացրեց պետական ապարատում եւ զինվորականության շրջանում՝ մաքրելով դրանք «եվրասիական» տարրերից: Եվ չնայած Թուրքիայի ներկայիս վարչակարգը նույնպես ընդունում է Պեկինի հետ համագործակցության ռազմավարական կարեւորությունը, այդ երկրի շրջվելը դեպի Չինաստան՝ որպես իր նոր ռազմավարական դաշնակից, ներկայումս անհավանական է:

Վերջերս Թուրքիայում հնչեցին տեսակետներ՝ փաստացի Չինաստանի կողմից առաջնորդվող Շանհայի համագործակցության կազմակերպությանը (ՇՀԿ) միանալու հնարավորության մասին: Նման տեսակետները բարձրաձայնվեցին հատկապես Ֆրանսիայի եւ Գերմանիայի կողմից ԵՄ-ին Թուրքիայի անդամակցության ընթացքը փաստորեն արգելակելուց հետո: Սակայն քանի որ ՇՀԿ-ն իրականում դեռեւս մնում է որպես բավական ամորֆ կառույց, Անկարայում նման հայտարարությունները կարելի է դիտել ընդամենը որպես Արեւմուտքին ուղղված դեմարշ, այն էլ՝ ոչ պաշտոնական մակարդակով:

Այսպիսով, հետեւելով չին-թուրքական հարաբերությունների զարգացմանը՝ կարելի է փաստել, որ դրանք ունեն սերտացման եւ խորացման բնույթ, սակայն դժվար թե վերածվեն ռազմավարական համագործակցության: Ավելին, Թուրքիայի կողմից տարվող եւ «նեոկայսերական» որակվող արտաքին քաղաքականությունն այսպես թե այնպես բերում է Եվրասիայում Չինաստանի շահերի հետ բախմանը: Ակնհայտ է, որ եթե Թուրքիան մտադիր է առաջ տանել իր հավակնությունները Եվրասիայում՝ փորձելով ունենալ Չինաստանին, ինչպես նաեւ ԱՄՆ-ին ու Ռուսաստանին համարժեք դերակատարում, ապա պետք է պատրաստ լինի նաեւ այդ խոշոր դերակատարների հակազդեցությանը:

ՀՆԴԿԱՍՏԱՆ՝ ՆՈՐ ԳԵՐՏԵՐՈՒԹՅՈՒՆ

Սուրեն Մանուկյան

Վերջին շրջանում, հատկապես Չինաստանի հզորացման պարագայում, կարծես աննկատ է մնում մեկ այլ հեռանկարային եւ հավակնոտ ասիական հսկայի վերելքը: Հնդկաստանը փոխակերպվում է մի պետության, որն ունակ է լրջորեն ազդել համաշխարհային ուժային հավասարակշռության վրա:

Հնդկաստանը 21-րդ դար է մտնում մի շարք ռազմավարական առավելություններով՝ հսկայական տարածք, ժողովրդագրական չափազանց մեծ հնարավորություններ, տեխնոլոգիական թռիչք արձանագրած ուժեղ տնտեսություն եւ կայսերական գաղափարախոսությամբ ակտիվ դիվանագիտություն:

Հնդկական էքսպանսիան

Սառը պատերազմից հետո, հրաժարվելով սոցիալիզմից, Հնդկաստանը հաջողությամբ իրականացրեց տնտեսական բարեփոխումները, միաժամանակ, հետեւողական աշխատանք տանելով տարածաշրջանում եւ աշխարհում երկրի վարկանիշի բարձրացման ու հզորության ավելացման ուղղությամբ:

Վերականգնվեցին հին առեւտրական կապերը եւ քայլեր ձեռնարկվեցին մի շարք երկրների եւ կազմակերպությունների (ԱՍԵԱՆ, Պարսից ծոցի երկրների համագործակցության խորհուրդ եւ Աֆրիկայի հարավի երկրների զարգացման համագործակցություն) հետ ազատ առեւտրի միջավայրերի ձեւավորման համար: Արդյունքում՝ Հնդկաստանը դարձավ Հարավային Ասիայի տնտեսական ինտեգրացիայի շարժիչ ուժը, որն իրեն է կապում տարածաշրջանի պետությունները:

Երկիրը վերածվել է նաեւ խոշորագույն ներդրողի, որի միջոցով տարածում է իր քաղաքական ազդեցությունը: Օրինակ, Հնդկաստանը 2,1 միլիարդ դոլարի ներդրում է կատարել Աֆղանստանի ենթակառուցվածքների վերականգնման եւ քաղաքացիական ծառայողների պատրաստման համար: Երկրի աճող տնտեսության համար անհրաժեշտ նավթի նոր աղբյուրների որոնման գործում հնդկական էներգետիկ ընկերություններն ակտիվություն են ցուցաբերում ամբողջ աշխարհում՝ Կենտրոնական Ասիայից եւ Սիբիրից մինչեւ Արեւմտյան Աֆրիկա ու Վենեսուելա:

Սակայն Հարավային Ասիայում բարդ իրավիճակը՝ Նեպալում քաղաքական անկայունությունը, Բանգլադեշում իսլամական ծայրահեղականության վտանգը, Շրի Լանկայում քաղաքացիական պատերազմի սպառնալիքը, գումարած՝ Պակիստանի եւ Աֆղանստանի անորոշ ապագան, կարող են լրջորեն խանգարել Հնդկաստանի հավակնոտ ծրագրերին:

Այս պայմաններում Հնդկաստանի շահերից է բխում քաղաքական կայունության պահպանումը եւ հարեւանների հետ հակասությունների կարգավորումը: Հնդկաստանի այս ձգտումն աջակցություն է ստանում բոլոր գերտերությունների, այդ թվում նաեւ Չինաստանի կողմից: Բոլորն ընդունում են Դելիի կարեւորությունը տարածաշրջանային անվտանգության հարցերում:

Տպավորիչ է նաեւ Հնդկաստանի ծովային ազդեցությունը: Երկրի նավատորմը կայունացնող նշանակություն ունի Հնդկական օվկիանոսի ամբողջ ջրավազանում: Հնդկական նավատորմը, այս փուլում, աշխատում է ոչ մի կերպ չբախվել Չինաստանի առաջխաղացման հետ: Եթե Պեկինը շարժվում է հիմնականում դեպի Հարավարեւելյան Ասիա եւ Խաղաղ օվկիանոս, ապա Հնդկաստանը կենտրոնացել է Հնդկական օվկիանոսի ավազանի եւ Հարավային Աֆրիկայի ուղղությամբ: Հնդկաստանը մեծ տեղ է հատկացնում այդ տարածաշրջանների բոլոր ծովափնյա պետությունների հետ կապերի ընդլայնմանը՝ օգտագործելով, մասնավորապես, հնդկական սփյուռքը:

Այս պայմաններում ավելի առարկայական են դառնում Դելիի նկրտումները գերտերության կարգավիճակ ձեռք բերելու ուղղությամբ: Մեկ միլիարդ բնակչություն ունեցող երկիրը չի կարող դուրս մնալ աշխարհի ճակատագրին վերաբերող որոշումների ընդունման գործընթացից: Արդեն բավական ժամանակ է, ինչ Հնդկաստանի քաղաքական առաջնորդները բարձրաձայնում են ՄԱԿ բարեփոխման, մասնավորապես՝ Անվտանգության խորհրդի մշտական անդամների շրջանակը Հնդկաստանով համալրելու խնդիրը: Հարկ է նշել, որ Հնդկաստանը պարբերաբար մեծաթիվ զինվորական ստորաբաժանումներ է տրամադրում ՄԱԿ խաղաղապահ գործողություններ իրականացնելու համար: Սրա հետ մեկտեղ՝ Հնդկաստանը ներգրավված է նաեւ մի շարք կազմակերպություններում, որոնք էլ ավելի են բարձրացնում նրա համաշխարհային դերակատարությունը (Շանհայի համագործակցության կազմակերպություն, BRIC– Բրազիլիա, Ռուսաստան, Հնդկաստան, Չինաստան):

Գերտերության կարգավիճակի կարեւորագույն գրավական է նաեւ միջուկային զենքի տիրապետումը: Մի շարք նախնական փորձարկումներից հետո, 1998թ. Հնդկաստանը դարձավ միջուկային տերություն, ինչը

Պակիստանի ու Չինաստանի հետ ռազմական հավասարակշռության պահպանման, ինչպես նաեւ սեփական քաղաքական հավակնությունները հաստատելու միջոց էր:

Հակառակորդ հարեւանները

2010թ. սկզբին Հնդկաստանի ԶՈւ ցամաքային զորքերի հրամանատար Դիպակ Կապուրը հայտարարեց, որ երկրի ղեկավարությունը պատրաստվում է վերանայել ռազմական դոկտրինը: Ըստ նոր ռազմավարության, Դելին պետք է պատրաստ լինի ոչ միայն լուծել սեփական պետության անվտանգության ապահովման խնդիրը, այլեւ միաժամանակ երկու ճակատով պատերազմի Պակիստանի ու Չինաստանի հետ:

Պակիստանի հետ հարաբերությունները կենտրոնական տեղ են զբաղեցնում հնդկական արտաքին քաղաքականության մեջ: Պակիստանի համար հնդկական պետությունը հենց իր գոյության փաստով «պատմական թշնամի է»:

Այն պահից, երբ Բրիտանական Հնդկաստան գաղութի տարածքում առաջացան երկու պետություններ՝ հինդուիստական Հնդկաստանը եւ իսլամական Պակիստանը, նրանք անգիջում թշնամիների վերածվեցին: Հիմնական վեճը մուսուլմանական մեծամասնությամբ Քաշմիրի նահանգի պատկանելության չլուծված հարցն էր: Այն երկու երրորդով Հնդկաստանի վերահսկողության տակ է, իսկ մեկ երրորդով՝ Պակիստանի, սակայն յուրաքանչյուրը Քաշմիրն ամբողջությամբ համարում է իր անբաժանելի մասը: Այս թշնամանքի արդյունքում քանիցս ռազմական բախումներ են տեղի ունեցել, իսկ 2003թ. կողմերը շատ մոտ էին պատերազմի: Եվ միայն միջուկային զենքի երկուստեք տիրապետումն է, որ կողմերին ավելի զգույշ է դարձրել եւ զսպիչ գործառույթ է իրականացնում: Ավելին, նույնիսկ 2008թ. նոյեմբերին, երբ մի խումբ զինյալներ, որոնց հետքերը բացահայտ տանում էին Պակիստան, ահաբեկչական գործողություն իրականացրին Հնդկաստանի գործարար մայրաքաղաք Մումբայում՝ սպանելով մոտ հարյուր վաթսուն մարդ, երկու պետությունները թեեւ սառեցրին հարաբերությունները, սակայն առճակատման չգնացին:

Արեւելքից Հնդկաստանը սահմանակից է Չինաստանին, որի հետ հարաբերությունները նույնպես չափազանց մեծ նշանակություն ունեն Դելիի համար:

Երկու պետությունները մրցակցում են Ասիայում լիակատար գերիշխանության հասնելու համար եւ բախվում մի շարք զգայուն հարցերում: Դեռ 1959թ. Տիբեթում ապստամբության ճնշումից հետո, երկրամասի հազարավոր բնակիչներ, Դալայ լամայի հետ միասին քա-

ղաքական ապաստան ստացան Հնդկաստանում: 1962թ. երկու պետությունների միջեւ նույնիսկ կարճատեւ պատերազմ տեղի ունեցավ, որն ավարտվեց Հնդկաստանի կատարյալ պարտությամբ: Հարաբերությունները բարելավվեցին միայն 1988թ. դեկտեմբերին, երբ Հնդկաստանը ճանաչեց չինական սուվերենությունը Տիբեթի նկատմամբ, իսկ Չինաստանը կրճատեց սահմանի երկայնքով տեղակայված իր զորքերի չափը: Այս շրջանից, հիմնականում Հնդկաստանի ջանքերի շնորհիվ, սկսվում է երկու երկրների միջեւ տնտեսական հարաբերությունների բարելավումը: Երկկողմանի առեւտուրը վերջին տասնամյակի ընթացքում ավելացել է ավելի քան հարյուր անգամ: Սակայն աճող տնտեսությունները բերելու են ռեսուրսների եւ շուկաների համար մրցակցության նոր աճի, մասնավորապես Բիրմայի նավթի եւ գազի հանքավայրերը տիրապետելու համար: Բացի այդ, Հնդկաստանը տագնապում է Չինաստանի կողմից Պակիստանին տրամադրվող քաղաքական եւ ռազմական օգնության, ինչպես նաեւ Պեկինի ռազմական հզորացման պատճառով:

Իսկ, ահա, ջրային խնդիրները (Հնդկաստանի երկու խոշորագույն գետերի՝ Բրահմապուտրայի եւ Գանգեսի ակունքները սկսվում են չինական Տիբեթում) լուծվում են փոխադարձ համաձայնության միջոցով:

Այսպիսով, Հնդկաստանի տնտեսական, ռազմական եւ քաղաքական կշռի ավելացումը որոշակիորեն զգաստացրել է իր հակառակորդներին, որոնք փորձում են Դելիի հետ առճակատումից անցնել ավելի բարյացակամ հարաբերությունների:

ԱՄՆ նոր դաշնակիցը

Սառը պատերազմի ավարտից հետո, Հնդկաստանը հայտնվեց նոր ռազմավարություն մշակելու հրամայականի առաջ, եւ հիմնական գործընկերոջ հարցը լուծվեց ԱՄՆ-ի հետ սերտ հարաբերությունների հաստատման տեսքով: 2000թ. Դելի է այցելում ԱՄՆ նախագահ Բ.Քլինթոնը, որը խորհրդանշական մեկնարկ է տալիս ԱՄՆ–Հնդկաստան նոր հարաբերություններին, որոնք 2005թ. հուլիսին ամերիկա–հնդկական միջուկային պայմանագրի ստորագրումից հետո վերածվեցին ռազմավարական գործընկերության: ԱՄՆ-ը ճանաչեց Հնդկաստանի միջուկային հավակնությունները, Քաշմիրի հակամարտության հարցում ավելի հավասարակշռված դիրքորոշում որդեգրեց: Հասկանալի է, որ Վաշինգտոնի հիմնական նպատակը Հնդկաստանի միջոցով Չինաստանի տարածաշրջանային եւ գլոբալ ռազմաքաղաքական ազդեցության համար հակակշիռ ստեղծելն էր: Թեեւ Վաշինգտոնը չի հրաժարվում Պակիստանի հետ համագործակցությունից, սակայն այս հարցում Իսլամաբադի հնարավորությունները սահմանա-

փակ են՝ հաշվի առնելով չինա-պակիստանյան ջերմ հարաբերությունները եւ Պակիստանում տիրող ներքաղաքական անկայուն իրավիճակը:

Հնդկաստանը նաեւ ամերիկյան ռազմական տեխնիկայի ամենամեծ գնորդն է: Ծավալները նույնիսկ ավելի մեծ են, քան դաշնակցային հարաբերությունների շրջանակում Պակիստանին տրվող ամերիկյան ռազմական մատակարարումները:

Այսօր ԱՄՆ եւ Հնդկաստանի քաղաքական հետաքրքրությունների շրջանակը շատ մեծ է՝ ահաբեկչության եւ իսլամական ծայրահեղականության դեմ պայքարից (Հնդկաստանը գրավում է աշխարհում երրորդ տեղը մուսուլման բնակչության թվաքանակով) մինչեւ ծովային ուղիների անվտանգության ապահովումը եւ ժողովրդավարության տարածումը: Դելիին գիտակցել է, որ Հնդկաստանի արդյունավետ զարգացման համար, անհրաժեշտ է ԱՄՆ աջակցությունը, իսկ Վաշինգտոնը ճանաչել է Հնդկաստանի վճռական դերը միջազգային անվտանգության հարցերում:

Հարաբերությունների նման բուռն զարգացման պատճառներից են նաեւ Հնդկական շատ ուժեղ լոբբին Վաշինգտոնում, ամերիկյան տեղեկատվական տեխնոլոգիաների հսկաների սերտ կապերը հնդկական ընկերությունների հետ, ինչպես նաեւ Հնդկաստանի քաղաքական համակարգի մոտ լինելը ամերիկյան մոդելին: Ուրույն հինդուիստական քաղաքակրթությանը հավատարիմ մնալով՝ Հնդկաստանը ձեւավորել է այնպիսի քաղաքական ինստիտուտներ, որոնք գրեթե ամբողջությամբ համապատասխանում են արեւմտյան չափանիշներին: Երկրում գործում է բազմակուսակցական համակարգ, ընթանում են ժողովրդավարական գործընթացներ: Եվ սա ոչ միայն բրիտանական գաղութային տիրապետության շրջանի ժառանգություն է, այլ լիովին ընդունված եւ յուրացված քաղաքական մշակույթ: Պատահական չէ, որ Հնդկաստանն անվանում են աշխարհի ամենամեծ դեմոկրատիա:

Բրիտանական ժառանգության ազդեցությունը, թերեւս, առավել մեծ է արտաքին քաղաքական ոլորտում: Ընդարձակման եւ յուրահատուկ առաքելության իրականացման որոշակի մղումները հենց անգլո-սաքսոնական քաղաքական մշակույթի տարրեր են: Եվ վերջին տարիներին դրանք ավելի ցայտուն են դրսեւորվում, քան հինդուիզմի տարբեր հոսանքների խառնուրդից առաջացած Գանդիի խաղաղասիրական եւ Սատյագրահայի (ճշմարտության ուժ) տեսությունները: Հնդկաստանը դրսեւորում է միջազգային քաղաքականության մեջ սեփական դերակատարության ավելացման հստակ ձգտում:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Գագիկ Տեր-Հարությունյան
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ 1

Սեւակ Սարուխանյան
ՀԱՅԱՍՏԱՆ–ԻՐԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.
ՈՐՈՇ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ 6

Ռուբեն Մելքոնյան
ԿՐՈՆԱՓՈԽ ՀԱՅԵՐԻ ՍԵՐՈՒՆԴՆԵՐ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ 11

Վահրամ Հովյան
ՍԻՐԻԱՅԻ ՀԱՅ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ 16

Արաքս Փաշայան
«ՍՈՒՆՆԻԱԿԱՆ ԽՆԴԻՐՆ» ԱԴՐԲԵՋԱՆՈՒՄ 22

Բենիամին Պողոսյան
ՌՈՒՍԱՍՏԱՆ–ԱՄՆ.
ՎԵՐԱԳՈՐԾԱՐԿՈՒՄԻՑ ՄԵԿ ՏԱՐԻ ԱՆՑ 27

Հայկ Գաբրիելյան
ԹՈՒՐՔԻԱՆ ԵՎ ԻՐԱՆԻ ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ՇՐԱԳԻՐԸ 33

Սուրեն Սարյան
ՉԻՆԱՍՏԱՆԸ ԵՎ ԹՈՒՐՔԻԱՆ.
ԵՎՐԱՍԻԱՅՈՒՄ ԴԻՐՔԵՐԻ ՃՇԳՐՏՄԱՆ ԸՆԹԱՑՔ 40

Սուրեն Մանուկյան
ՀՆԴԿԱՍՏԱՆ՝ ՆՈՐ ԳԵՐՏԵՐՈՒԹՅՈՒՆ 44

Շապիկին պատկերված է
Եփրատի հովիտը
Երզնկա–Կամախ հատվածում

«ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ», Հայաստանի
Հանրապետական կուսակցության հրատարակություն
Խմբագրական խորհուրդ
Երեւան, 375010, Մելիք-Ադամյան 2: *Հեռ. 58 04 91, 58 04 83:*
էլ. փոստ՝ hanrapetakan@hhk.am:
Հիմնադիր՝ Հայաստանի Հանրապետական կուսակցություն:

Թուղթը՝ օֆսեթ, ֆորմատը՝ 70×108 1/16:
Պայմանական 4 մամուլ: Տպաքանակը՝ 1000:
Տառատեսակը՝ «Arial Armenian» եւ «Vs Helvetica»:
Վկայական՝ Ο1Մ 000176:
Տպագրվել է «Ամարաս» տպարանում: